Հոգեւոր պահանջմունքների իսպառ բացակայության են փորձում հասնել: Տանեն նրան, որ մարդիկ հոգեւոր պահանջմունքներ չունենան: Ծաղրանկարներ կան, որ շունը կատվի նկարի ետեւից է վազում, կամ՝ սկյուռին գցում են պտտվող օղակի մեջ, եւ նա չի կարողանում դուրս գալ: Մեր ժողովրդին նույն իրավիճակի մեջ են փորձում գցել:

Կարդացեք՝ էջ 5

Պետք է հասկանալ, որ հակամարտության հետեւանքները չեն կարող շտկվել: Ադրբեջանի մոտ 4 հազար անհետ կորած քաղաքացիների ճակատագիրը հրատապ հարց է ադրբեջանական հասարակության համար: Հայաստանում քաղաքական գործիչները վերջերս պնդում էին, որ տեղեկություններ ունեն նրանց թաղման վայրերի մասին, բայց չեն տրամադրում:

Կարդացեք՝ էջ 6

Ապրիլի 24-ին եւ 25-ին հետեւել եմ հուշահամալիր գնացող եւ «քաղաքացու օր նշող» քաղաքացիների դեմքերին: Դրանք նույն մարդիկ չէին, ես կասեի՝ անգամ նույն ազգից չէին, նույն հոգսն ու մտքերը չունեին, տարբեր էին այնքան, որ գուցե ոչ էլ նույն մոլորակից էին: Ուրեմն կան երկու տեսակի քաղաքացիներ, երկու Հայաստան:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 68 (4203), 28 ապրիլ, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Սոտ մեկ տարի առաջ Ռուսաստանում փակվեց Արցախի մշտական ներկայացուցչությունը, որը գործում էր երկար տարիներ: Ներկայացուցչության գործառույթները մասամբ փոխանցվել են Ռուսաստանում ՀՀ դեսպանատանը՝ մեկ հաստիք ավելացնելու միջոցով: Մենք տեղեկացանք, որ ներկայացուցչության շենքի առջեւ դրված Արցախի դրոշն իր տուն է տարել Ռուսաստանում ապաստանած ԴԱՀԿ նախկին ղեկավար Միհրան Պողոսյանը, որը մասունքի պես այդ դրոշը հիմա պահում է իր տան մի անկյունում: ԴԱՀԿ նախկին ղեկավարը, հիշեցնենք, 2019-ից հետախուզման մեջ է: Նրան Հայաստանում մի շարք դրվագներով մեղադրանքներ են առաջադրվել՝ խոշոր չափերով գույքի հափշտակություն, պաշտոնեական լիազորությունների չարաշահում, փողերի լվացում եւ այլն: 2023-ի մայիսի 17-ին ՀՀ ԱԱԾ-ն հայտարարեց մեկ տոննա կոկաինի՝ Հայաստան ներմուծման փորձ բացահայտելու մասին, որը հայտնաբերվել էր նրա ընկերությունում: Պողոսյանին մեղադրանք առաջադրվեց 250 միլիոն եվրոյի թմրամիջոցի մաքսանենգության գործով, չնայած թմրանյութի մասին հաղորդումը հենց ինքն էր տվել: Միհրան Պողոսյանն անցած տարի կուսակցություն բացեց եւ նպատակ ուներ ընտրություններին մասնակցել, սակայն որեւէ ուժի հետ համագործակցությունը չկայացավ:

Ինչ հայ հանրությունը գուշակում է, թե Իլհամ Ալիեւն ընտրությունների շեմին ինչով եւ ինչպես է աջակցելու իր ընկեր Նիկոլ Փաշինյանին, եւ կանխատեսումներ են անում, որ գուցե Ադրբեջանը սահմանային մի միջադեպ սարքի, որ ՔՊ-ականները պատերազմով սարսափեցնեն հայ ընտրողներին ու քվե կորզեն, պարզվում է՝ Ալիեւն ավելի լավ լուծում է գտել: Մեր տեղեկություններով, Ալիեւն ուզում է մինչեւ ընտրությունները գերիների 2 խմբի վերադարձնել Հայաստանին: Մի խմբում կլինեն 8 հոգի, մյուսում՝ 3: Բացառությամբ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության, 19 գերիներից 11-ը, որոնց մեծ մասը 2020 թվականից ի վեր Բաքվի բանտում տառապում էր, կվերադառնա հայրենիք: Անշուշտ, մեծ ցնծություն կտիրի Հայաստանում, եւ Ալիեւը հույս ունի, որ այս քայլով անխուսափելի կդարձնի սիրելի գործընկերոջ՝ Նիկոլ Փաշինյանի վերընտրությունը: Այն, որ գերիների վերադարձի թեման համաձայնեցվել է Նիկոլ Փաշինյանի հետ, վկայում է նաեւ Արցախի ղեկավարությանը վերադարձողների ցանկում չընդգրկելը: Չէ՞ որ նրանց վերադարձը կարող էր Հայաստանում ներքաղաքական մթնոլորտ փոխել եւ մեր ժողովրդի կոտրված ոգին բարձրացնել:

Վախ եւ տեռոր

Իշխանության եկած օրվանից պառակտում, թշնամանք մտցնես, մեկ մի թիմի դեմ անթույլատրելի լեքսիկոնով հայտարարություններ անես, մեկ՝ մյուսի, ոչ մի արժեք ու սրբություն չթողնես անաղարտ մնա՝ ո՛չ Արցախ ու ղարաբաղյան շարժում, ո՛չ պատմական հայրենիք ու ցեղասպանության խորհուրդ, ո՛չ Արարատի սիմվոլ ու բանակի հանդեպ հարգանք: Զինվորականներին մեղադրես հայրենիքին դավաճանելու մեջ, պետական բարձրաստիճան պաշտոնյաներին՝ պետությունը թալանելու, նույնիսկ Բաքվի բանտերում գտնվող կամ անտուն մնացած հայրենակիցներիդ չխնայես: Գաս հասնես 2026 թվական եւ նորից փորձես պառակտելով ու ատելությամբ, մարդկանց ցածր կրքերն օգտագործելով՝ վերընտրվել: Փորձես քեֆ-ուրախություններով, շոու-բեմականացումներով մարդկանց ներշնչել, որ ամեն ինչ լավ է երկրում, որ տիրապետում ես իրավիճակին եւ կայուն զարգացում ես ապահովել: Մինչդեռ ամեն քայլափոխի, ամենուր ավերածություններ են. ասֆալտը քանդվում է, տրանսպորտը չի բավարարում, խցանումներից մարդիկ խելագարվում են, հեղուկ գազի գինը թռել է: Թրիփփի մասին մոռացվել է, Ադրբեջանը շարունակում է սպառնալ, անգամ պահանջում է ապրիլի 24-ին թուրքական դրոշ այրած երիտասարդների նկատմամբ քրեական գործեր հարուցել: Բանտերը լեփ-լեցուն են, քաղբանտարկյալների թիվը չի նվազում: Ընտրական խախտումների անվան տակ ընդդիմությանը թույլ չեն տալիս քարոզչություն անել, իսկ «Իմ քայլը» ոչ միայն շարունակում է բարեգործությունը, այլեւ իր խախտումները մատնացույց անողի դեմ քրեական գործ հարուցելու «պատվեր» է իջեցնում: Նիկոլ Փաշինյանն էլ, մարզերն ընկած, կառավարության ղեկավարի դիրքն օգտագործելով, ոչ միայն օրենք է խախտում, որ հունիսի 7-ին վերընտրվի, այլեւ վախի ու տեռորի այնպիսի մթնոլորտ է ստեղծել, որ նախկիններն ուղղակի երանի կտային:

Ապրիլի 26-ին Տավուշի մարզ այցելած Նիկոլ Փաշինյանը լայվով ներկայացնում էր, որ Բերդ համայնքի Չինչին գյուղ մտնող ճանապարհը նախկինում ասֆալտապատ չէր՝ այժմ ասֆալտապատ է: Չինչինի կենտրոնում հավաքված, նախապես պարապած դպրոցականները Փաշինյանին դիմավորեցին «Նիկոլ՝ վարչապետ» վանկարկումներով: Գյուղամիջում Փաշինյանը Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրեց՝ ի՞նչ վիճակում է Չինչինի դպրոցի շենքը, մարզպետն ասաց, որ դպրոցում հին վիճակն է՝ նախատեսված է Չինչինի դպրոցը միացնել Նավուրի դպրոցին: Չինչինի միջնակարգ դպրոցն այժմ 41 աշակերտ ունի: Եթե հունիսի 7-ի ընտրություններով Փաշինյանի իշխանությունը վերընտրվի, «Նիկոլ՝ վարչապետ» գոռացող աշակերտներն աշնանը կհասկանան, թե ինչքան դժվար է հարեւան Նավուր գյուղ տանող դպրոցի ճամփան:

Լավ ինչան

«Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ, արցախյան պատերազմների մասնակից, հայտնի հետախույզ, հրամանատար Արթուր Ավանեսյանին՝ Կանդազին ձերբակալելուց ժամեր անց ձերբակալող մարմինը՝ Հակակոռուպցիոն կոմիտեն, մեղադրանքի մասին մի անհասկանալի պարզաբանում տարածեց. «ՀՀ ԱԺ ընտրություններին իրենց օգտին քվեարկելու դիմաց մի շարք ընտրողների աշխատանքի ընդունելու եւ այլ եղանակով խոստացել է տալ կաշառք, որպիսի խոստումն ընդունվել է վերջիններիս կողմից»: Մինչդեռ հրամանատարին մոտ շրջանակից տեղեկացանք, որ իրավապահները գաղտնալսել են Կանդազին՝ նա նախկին զինվորական ընկերների հետ զրույցում ասել է, որ եթե Սամվել Կարապետյանը գա իշխանության, իրենց բոլորի համար լավ է լինելու, բացի այն, որ աշխատանք կունենան, այլեւ Արցախը հետ կբերեն: Սա են դիտել օրենքի խախտում: Ի դեպ, ասում են, որ նա արցախցիների համար հեղինակություն է, եւ շատերը հանուն նրա քվեարկելու են «Ուժեղ Հայաստանի» օգտին: Մեզ պատմեցին, որ Կանդազի մասին հերոսական եւ անհավանական պատմություններն ամենեւին էլ լեգենդներ չեն, օրինակ՝ դեմքի սպին նա հետախուզության ժամանակ է ստացել, երբ թաքստոցում խոզը հարձակվել է նրա վրա, կրծել դեմքը եւ խոր վնասվածքներ պատճառել նրան:

*Հարցազրույց իրանագետ, ԵՊՀ պրոֆեսոր **Վարդան Ոսկանյանի** հետ*

ԱՄՈԹԱԼԻ Է ՀՀ ՈՐԵՎԷ ՏԱՐԱԾՔ՝ ԼԻՆԻ ՈՒՂԻ ԿԱՄ ԱՅԼ ՄԻԱՎՈՐ, ԿՈՉԵԼ ԵՐՐՈՐԴ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՆՈՒՆՈՎ

- Իրանի դեմ պատերազմը կարծես վերածվել է Հորմուզի նեղուցի վերահսկողության խնդրի: ԱՄՆ-ն կկարողանամ այդ խնդիրը լուծել իր ուզածով:

- Իրանցիները լավ նախապատրաստվել են պատերազմական նման սցենարի, որը ենթադրում է ասիմետրիկ գործողություններ, եւ դրա գործիքակազմերից մեկը, որ Իրանն ակտիվորեն օգտագործում է, Հորմուզի նեղուցն է: Նեղուց, որը ջրային նեղ տարածք է, եւ Իրանը, լինելով այդ տարածքի հյուսիսային ափին, ունի հնարավորություն՝ եւ ռազմական, եւ քաղաքական, եւ աշխարհագրական առումով վերահսկելու այն: Իսկ նեղուցը ոչ միայն կարեւոր հաղորդուղի է, այլեւ չափազանց կարեւոր է համաշխարհային էներգետիկ անվտանգության տեսանկյունից, որովհետեւ աշխարհում սպառվող նավթագազային պաշարների 20 եւ ավելի տոկոսն անցնում է Հորմուզի նեղուցով, նաեւ այլ ապրանքներ՝ պարարտանյութ եւ այլն: Ուստի Իրանը պատերազմի առաջին իսկ շաբաթը վերահսկողություն հաստատեց նեղուցի վրա՝ փորձելով իր ասիմետրիկ քաղաքականության շրջանակներում համաշխարհային տնտեսության համար խոչընդոտներ ստեղծելով՝ զսպել ԱՄՆ-ի եւ Իսրայելի ագրեսիան, եւ դա զգալիորեն հաջողվեց: Որովհետեւ ԱՄՆ-ում չափազանց կարեւոր է վառելիքի գինը, որն ազդում է ներքաղաքական տրամադրությունների վրա: Ուստի, ստեղծվել են նկատելի դժվարություններ այս վարչակարգի համար: Եթե կարճ՝ ըստ էության, Իրանի դեմ պատերազմը վերածվել է Հորմուզի նեղուցի համար պատերազմի: Եվ այս իրավիճակը կառավարելու համար ԱՄՆ գործիքակազմը հարուստ չէ: Եթե նեղուցն ամբողջովին վերահսկելու խնդիր դրվի, ապա պետք է իրականացվեն ցամաքային գործողություններ, որն անիրատեսական է Իրանի պես հսկայածավալ երկրում, քանի որ ցամաքային գործողություններով Իրանը նվաճելու համար, ըստ տարբեր գնահատականների, պահանջվելու է կես միլիոնանոց բանակ, որն ԱՄՆ-ն չի կարող ապահովել՝ հաշվի առնելով լոգիստիկան եւ այլն: Նաեւ՝ այն, որ Իրանում ամեն պատի հետեւից կրակելու են ամերիկացիների վրա: Իսկ ԱՄՆ-ն որեւէ այլ լծակ չունի, բացի ցամաքային գործողության միջոցով նեղուցը բացելը: Քանի որ դա անիրատեսական է, փորձում են ամբողջ Իրանը ենթարկել ծովային շրջափակման, որն այդքան էլ հաջող չի ընթանում:

- Իսկ ինչ վտանգներ է պարունակում Թրիփփն իր մեջ: Կարելի՞ է ԱՄՆ-ին՝ Իրանի քթի տակ նման բան տեղակայել կամ մեր եւ Իրանի պետական սահմանն ամբողջովին վարձով տալ մեկ այլ պետության:

- Ընդհանրապես, չի կարելի ՀՀ որեւէ տարածք, անկախ տեղից ու չափերից, տրամադրել օտարերկրյա պետության: Ինքնիշխանության ցուցիչը հենց դա է, որ դու չես անում նման քայլեր: Ընդհանրապես, ամոթալի է ՀՀ որեւէ տարածք, լինի դա ուղի կամ աշխարհագրական այլ միավոր, կոչել որեւէ երրորդ պետության նախագահի անունով: Հետեւաբար, նույնիսկ անվանումն ինձ համար առնվազն ամոթալի է: Ինչո՞ւ պետք է Սյունիքի մարզում լինի մի տարածք, որը կոչվի ԱՄՆ կամ որեւէ այլ երկրի նախագահի անունով: Հետեւաբար, այս հանգամանքը, գուցե զգացական մակարդակում, բայց մենք պետք է քննարկենք: Մյուս կարեւոր խնդիրը, եթե գանք աշխարհաքաղաքական ելակետին, ապա կարող ենք 2 սցենար ունենալ, խոշոր հաշվով: Սցենար համար 1. դիցուք, ԱՄՆ-ն կարողանում է իշխանափոխության հասնել Իրանում, որի հետեւանքով իշխանության է գալիս մեկը, որն Ամերիկայի խամաճիկն է: Այդ դեպքում Թրիփփ կոչված նախագիծը վտանգվում է, որովհետեւ ամբողջ Իրանի տարածքը փաստացիորեն դառնում է Թրիփփ: Այսինքն, այդ ուղին Ամերիկայի համար կորցնում է իր արդիականությունը, եւ ստեղծվում է լրացուցիչ վտանգ, որովհետեւ դա սկսում է արդիական դիտվել բացառապես Թուրքիայի եւ Ադրբեջանի համար: Սցենար համար 2. ԱՄՆ-ն չի կարողանում իշխանափոխության հասնել Իրանում, որն առավել իրատեսական է: Եթե Իրանում մնում է այն իշխանությունը, որն այսօր է, ապա այդ իշխանությունն իրականության մեջ շատ ավելի արմատական դիրքորոշումներ ունի ԱՄՆ-ի հանդեպ՝ հատկապես այս պատերազմի հետեւանքները նկատի առնելով, քան հանգուցյալ այաթոլա Խամենեիի ժամանակ էր: Հետեւաբար, այս համատեքստում իրանական դիրքորոշումները կոշտանալու են: Այսինքն, ամերիկյան յուրաքանչյուր ներկայություն, անկախ ձեւից՝ լինի ռազմական, թե տնտեսական, իրանական կողմից դիտարկվելու է վտանգ Իրանի անվտանգությանը: Եթե ուշադիր լինենք մինչեւ պատերազմը իրանական կողմի հայտարարություններին, ապա դրանք պետք է բանաձեւենք շատ կարճ ձեւակերպմամբ. մենք վստահում ենք Հայաստանին, բայց չենք վստահում Միացյալ Նահանգներին: Եվ դա Իրանի բնական իրավունքն է, որովհետեւ 2 անգամ՝ անցյալ եւ այս տարի, բանակցությունների ընթացքում Իրանը ենթարկվել է հարձակման:

- Եթե Թրիփփն անիրագործելի նախագիծ է, այդ դեպքում ինչ է սպասվում՝ պատերազմ, թե՞ մեկ այլ լուծում:

- Հայաստանից էլ հակասական հայտարարություններ են հնչում, թե առայժմ դա Միացյալ Նահանգների համար արդիական չէ: Հետո հարցում ուղարկվեց ԱՄՆ Պետդեպարտամենտ, եւ ստացվեց գրավոր պատասխան: Ընդ որում, պատասխանը շատ «հետաքրքիր» է, առաջին նախադասությունը հետեւյալն է. «Թրիփփը, որն ապահովելու է կապն Ադրբեջանի եւ նրա էքսկլավ Նախիջեւանի միջեւ»: Այսինքն, այն գեղեցիկ, փայլփլուն փաթեթավորումը, որով փորձ էր արվում այս ծրագիրը մեզ ներկայացնել, ըստ էության, սահմանափակվել էր Ադրբեջանի երկու հատվածների միջեւ կապն ապահովելու նպատակով: Եթե այդ ծրագիրը չիրականացվի, կրկին վտանգը բավական մեծ է: Ուզում եմ խոսել ավելի խոշոր խնդրի մասին. հիշո՞ւմ եք հայտարարությունը, թե 99 տարով ապահովել ենք Հայաստանի գոյությունը եւ այլն: Այսինքն, Հայաստանի պետականության գոյությունը կապված է ԱՄՆ որեւէ նախագահի կամ որեւէ ճանապարհի լինել-չլինելու հետ: Սա, ըստ էության, ՀՀ անվտանգության քաղաքականության տապալման խոստովանություն է: Հետեւաբար, մենք պետք է լրջորեն մտածենք 2 կարեւոր հանգամանքի մասին: Յուրաքանչյուր պետություն կայանում է 2 շատ կարեւոր առանցքային խնդիրների լուծման շնորհիվ: Առաջինն անվտանգության խնդիրն է, երկրորդը տնտեսության խնդիրն է: Եթե երկիրը տնտեսապես առաջադեմ չէ, եթե չի կարողանում սեփական անվտանգությունն ապահովել տարբեր մեխանիզմների միջոցով, առաջին հերթին՝ սեփական ուժերով, ապա այդ պետության ապագան մշուշոտ է: Հետեւաբար, մեր պետության ապագան պետք է կապենք ոչ թե մեկ ճանապարհի կամ մեկ ենթակառուցվածքի հետ, այլ, խոշոր հաշվով, պետք է մտածենք մեր պետության անվտանգության ճարտարապետությունը կառուցելու մասին: Դրա մեջ ԱՄՆ-ն էլ կարող է դեր ունենալ, բայց սա չի նշանակում, որ մենք մեր պետության գոյությունը պետք է կապենք զուտ մեկ ճանապարհի հետ: Կոպտագույն սխալ է եւ պոպուլիզմի հերթական դրսեւորում:

- Ադրբեջանն ու Թուրքիան Թրիփփը համարում են «Զանգեզուրի միջանցք»՝ իրենց ինքնիշխան տարածքի մաս, Հայաստանը՝ «Արեւմտյան Ադրբեջան», որը մենք չլսելու ենք տալիս: «Միջանցքն» ուժով բացելու դեպքում ինչ կարող ենք սպասել Իրանի կողմից:

- Ակնհայտ է, որ իրանական կողմը նախանշել է կարմիր գծեր, դրանցից մեկը ՀՀ տարածքային ամբողջականությունն է: Հաշվի առնելով, որ այժմ Իրանում շատ ավելի արմատական իշխանություն է, պետք է նկատի ունենանք, որ շատ ավելի ակտիվ եւ ռազմական ճանապարհով են հակազդելու, եթե Հայաստանի վրա, Աստված մի արասցե, տեղի ունենա ագրեսիա: Բայց մենք չենք կարող, ինչպես բացառապես մեկ ուղու եւ մեկ նախագահի, այնպես էլ մեր հույսը կապել միայն Իրանի հետ՝ առանց ապահովելու մեր անվտանգությունը, կոպտագույն սխալ կլինի դա մեր կողմից: Հետեւաբար, յուրաքանչյուր կայացած պետության առաջնահերթ գործառույթը տարածքային ամբողջականությունն է: Չի կարող լինել ինքնիշխան պետություն, երբ այդ պետության տարածքի թեկուզ մեկ թիզն օկուպացված է: Իսկ հիմա ՀՀ տարածքից օկուպացված հատվածներ կան:

- Այս ամենով հանդերձ, Հայաստանն ինչ քաղաքականություն պետք է վարի տարածաշրջանում՝ ապահովելով իր անվտանգությունը, հարատեւությունը:

- Հայաստանում, առաջին հերթին, պետք է փոխվի խոսույթը: Պատկերավոր ասեմ, սառնարանում երշիկի առկայության խոսույթը պետք է փոխվի նույնիսկ սառնարան չունենալու գնով՝ անվտանգություն ունենալով: Անվտանգության մասին վստահեցնելն այս տարածաշրջանում սին խոսքեր են: Հայոց պատմությունը հազարամյակների պատմություն է եւ հիմնականում պատերազմների պատմություն է: Ուզենք թե չուզենք, մեր տարածաշրջանն այդպիսին է: Որեւէ մեկը չի կարող այնքան մանկամիտ, նաիվ լինել, որ հավատա, թե այս տարածաշրջանում հավերժական խաղաղություն է լինելու: Չի՛ լինելու, ցավալիորեն: Հետեւաբար, մենք՝ որպես ազգ եւ պետություն, պետք է սկսենք վերակառուցվել այդ տրամաբանության շրջանակում, որը պետք է սկսվի անհատական մակարդակից: Ինձ խորհրդային տարիներին հետեւյալ մտայնությամբ են դաստիարակել, որ կամուսնանաս, կունենաս 2 երեխա, ցանկալի է՝ մեկը՝ աղջիկ, մյուսը՝ տղա, որպեսզի իրենց ապահովես բարձրագույն կրթությամբ եւ այլն: Լավ է, որ մարդիկ բարձրագույն կրթություն են ստանում: Բայց ինձ պետք է դաստիարակեին այլ մեթոդաբանությամբ՝ կունենաս 10 երեխա, որոնցից 1-2-ը բարձրագույն կրթություն կստանան, 1-2-ը բանվոր կդառնան, 2-3-ը զինվոր կդառնան: Իսկ երբ դու ունենում ես 1 որդի, շատ ցավոտ բան եմ ասում, ապա դրա կորուստն անտանելի է: Ցանկացած զավակի կորուստն է մեծագույն դժբախտություն, բայց այս տարածաշրջանում, եթե մենք ուզում ենք շարունակվել, պետք է այդպես վարվենք: Չեմ ասում՝ գոյատեւել, քանի որ «Էրմենիստան» ցուցանակով էլ որպես ադրբեջանական պրոտեկտորատ կարող ենք գոյատեւել՝ տոլմա պատրաստելով, քոչարի պարելով իրենց համար, բայց դա մեր երազանքը չէ: Մեր երազանքն այս տարածաշրջանում գերակայության հասնելն է, զարգանալը, ոչ թե գոյատեւելը: Մենք պետք է վերակառուցենք մեր հասարակությունը. սոցիալական ինժեներիան՝ գաղափարախոսությունը, մտայնությունը, մեխանիզմները եւ այլն: Այսօրվա աշխարհում ամեն ինչ հնարավոր է եւ շատ արագ է հնարավոր: Հետեւաբար, առանցքում պետք է դրվի մի բան՝ անվտանգություն: Խաղաղությունն էլ պետք է միտված լինի անվտանգության ապահովմանը: Խաղաղությունը նպատակ չէ, խաղաղությունը գործիք է, անվտանգությունն է նպատակ: Հայաստանի ապագան ապահովելու համար մենք պետք է կարդինալ փոխվենք՝ գաղափարական իմաստով, մտայնությամբ, կենցաղով: Սպառողական հասարակությունը չի կարող անվտանգությամբ ապրող հասարակություն լինել: Մարդը բանականություն ունի, ի տարբերություն կենդանական աշխարհի, հետեւաբար միայն սնվելը, սպառելը եւ վայելքներին տրվելը չեն կարող լինել բանականության ցուցիչ: Դա բնազդի ցուցիչ է: Այսօրվա սպառողական աշխարհում շատ դժվար է դա անելը, բայց ես իդեալն եմ նշում, իսկ մենք դրան կկարողանանք հասնել, թե չենք կարողանա՝ ուրիշ խնդիր է: Բայց դու պետք է սահմանես բարձր նշաձողը եւ հասնես դրան: Գուցե չկարողանաս, բայց սահմանումը շատ կարեւոր է: Այս գաղափարախոսական բոլոր հանգամանքները պետք է վերնախավերը մշակեն: Մեզ արդեն խլացրել են ինչ-որ պատառիկներ այստեղից-այնտեղից պոկած ու իրար կպցրած «իրական Հայաստան» կոչեցյալ խոսույթով: Ո՞ւր է դրա հակառակ խոսույթը: Իսկ մենք, ընդհանուր առմամբ, անդրադառնում ենք, թե սա սխալ է: Ո՛չ: Դու ոչ թե պետք է գրախոսես այդ խոսույթը, դու պետք է քո խոսույթն առաջ բերես:

Հուսիկ Արա

ԻՆՉԸ ԿԱՐԵԼԻ Է ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՈՒ ՆՐԱ ԿՆՈՋԸ, ՉԻ ԿԱՐԵԼԻ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԻՆ

ՀԵՏՊՂԴՈՒՄ

Տեւական ժամանակ է՝ Նիկոլ Փաշինյանի անձնական ցուցումով գործող իրավապահ կառույցներն ամենօրյա ռեժիմով քրեական հետապնդումներ են իրականացնում հունիսի 7-ին հայտ ներկայացրած ընդդիմադիրների, գլխավորապես՝ Սամվել Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամների եւ համակիրների նկատմամբ: Զանգվածային խուզարկություններ, բերման ենթարկել, մեղադրանքներ՝ Ընտրական օրենսգիրքը խախտելու համար: Արտաշատի, Արմավիրի, Շիրակի մարզի գրասենյակային աշխատողներն են թիրախում՝ իբր ընտրակաշառք բաժանելու համար: Հետո պարզվեց, որ ոչ թե ընտրակաշառք, այլ կուսակցական գործունեության համար մարդկանց աշխատավարձեր են տվել:

Օրենսդրության համաձայն՝ ընտրակաշառք է համարվում ընտրողին կամ հանրաքվեի մասնակցին գումար, գույք, ծառայություն կամ որեւէ այլ առավելություն առաջարկելը, խոստանալը կամ տրամադրելը՝ նրա քվեարկության վրա ազդելու նպատակով: Սա կարող է արտահայտվել ինչպես ուղղակի վճարումների, այնպես էլ տարբեր «թաքնված» ձեւերով՝ նվերների, ծառայությունների կամ արտոնությունների տրամադրմամբ: «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Գոհար Ղումաշյանին ձերբակալեցին, ապա մեղադրանք առաջադրեցին բարեգործության արգելքը խախտելու համար: Ղումաշյանը տարիներ շարունակ գործող իր «Անմահ գունդ» կազմակերպության անունից նվերներ է հանձնել վետերաններին, եւ ձերբակալությունն իրականացրել էին ոչ թե նվեր տալու առիթով, այլ այդ մասին հեռախոսային խոսակցության գաղտնալսման, որը հետեւանք չէր ունեցել, այսինքն՝ նվերը չէր հանձնվել: Հակակոռուպցիոն կոմիտեի հրապարակած ձայնագրության մեջ չկա որեւէ հատված, որտեղ Ղումաշյանը քարոզչություն է անում կամ քվեի դիմաց նվեր խոստանում:

Մինչդեռ իրավապահներն աչք են փակում վարչապետի կնոջ՝ Աննա Հակոբյանի ղեկավարած «Իմ քայլը» հիմնադրամի բարեգործությունների վրա: Երեկ էլ Հակակոռուպցիոն կոմիտեն բերման ենթարկեց արցախցի լեգենդար հետախույզ Կանդազին՝ Արթուր Ավանեսյանին, որն իբր հեռախոսային զրույցներում աշխատանքի խոստում է տվել զինվորականներին: Տպավորություն են ստեղծում, որ Սամվել Կարապետյանի թիմն ամենօրյա ռեժիմով ընտրակաշառք է բաժանում, խախտում բարեգործության, ընտրական խոստումներ տալու մասին օրենսդրական դրույթը, այն դեպքում, երբ Նիկոլ Փաշինյանի, նրա կնոջ ու թիմակիցների բաց-հրապարակային աշխատանքային, քարոզչական այցերի ընթացքում տասնյակ բացահայտ դեպքերի ենք ականատես լինում, որոնք իրավական հետեւանք չեն ունենում:

Փաստաբան **Վահան Հովհաննիսյանը**, որն «Ուժեղ Հայաստան» կուսակցության եւ աջակիցների շահերն է պաշտպանում քննչական մարմիններում, դատարաններում, երեկ մեզ վստահեցրեց, որ իրենք եւս իշխանության գործողություններում բազում նմանատիպ դեպքեր են արձանագրել եւ դիմել են իրավապահներին, սակայն գործ ունենք խտրական արդարադատության հետ՝ որեւէ դիմում մինչ այս պահին ընթացք չի ստացել: «Մենք իրավական ողջ գործիքակազմից օգտվում ենք եւ համապատասխան ամեն քայլ անում ենք: Բազմաթիվ անգամներ դիմել եմ հանցանքի մասին հաղորդմամբ, նաեւ՝ Փաշինյանի կողմից ընտրակաշառքի խոստման վերաբերյալ, երբ Երեւան քաղաքում քաղաքացուն խոստանում էր 12 հազար դրամ օրական աշխատավարձ եւ առաջարկում էր բերել նաեւ ընկերներին ու պատրաստակամություն հայտնում նրանց էլ աշխատանքի տեղավորել: Այս դեպքով անձամբ ես եմ դիմել, կան բազում այլ դեպքեր, որոնցով ուրիշ փաստաբաններ էլ են դիմել: Կոնկրետ իմ դիմումին քննչական մարմինները պատասխանել են, որ վարչապետի կողմից դա եղել է կարծիք, բայց ոչ խոստում կամ ընտրակաշառք: Այսինքն, երկակի մոտեցում են ցուցաբերում, մի դեպքում համարում են ընտրակաշառք, մյուս դեպքում՝ կարծիք: Անկախ իրավապահների աշխատանքից, մենք շարունակում ենք գործել, ձեռքներս ծալած չենք նստում, յուրաքանչյուր դեպք արձանագրվում է եւ հաղորդում ներկայացվում»,- վստահեցնում է փաստաբանը՝ ընդգծելով, որ իրենք այդ դեպքերը քարոզչական դրոշակ չեն դարձնում, ինչպես իշխանություններն են անում «Ուժեղ Հայաստան» կուսակցության հարցում՝ նպատակ ունենալով վարկաբեկել այդ ուժին: Օրինակ, այցերից մեկի ժամանակ էլ Փաշինյանը մարզպետին հանձնարարում էր քաղաքացուն աշխատանքով ապահովել կամ նախարարներին հորդորում էր հետամուտ լինել քաղաքացիների խնդիրներին եւ այլն:

Փաստաբանը, պատասխանելով մեր հարցին, վստահեցնում է, որ նմանատիպ դեպքերով չեն կարող կուսակցության գրանցումը կասեցնելու, չեղարկելու հիմքեր ստեղծել: Նա հիշեցնում է, որ այդ մասին իրենք՝ իշխանականներն էլ են հայտարարել, որ իրավական ճանապարհով չեն կարող դա անել. «Ընդհանրապես, ուշադրություն դարձրեք, որ ոչ մի միջնորդություն անգամ կալանքների մասով չի բավարարվել, բացառությամբ մեկ անձի մասով, մնացած բոլոր դեպքերում միջնորդությունները կամ մասնակի են բավարարվել, կամ ամբողջությամբ մերժվել անգամ հիմնավոր կասկածի դեպքում»:

Փաստաբան **Տարոն Սիմոնյանն** էլ, որը Գոհար Ղումաշյանի շահերն էր ներկայացնում, կարծում է, որ ընդդիմադիր քաղաքական գործիչները պետք է բարձրաձայնեն իշխանության գործողությունները, քանի որ իշխանությունն ակնհայտորեն իր արարքների մեջ հանցակազմ չի տեսնում, փոխարենը ընդդիմության համանման գործողություններով իրավապահներն են զբաղվում. «Ընդդիմադիր գործիչների արարքներում, որոնց հետ ես շփվել եմ, հանցակազմ չկա, քննիչներն էլ չեն թաքցնում, որ գործն անում են ու այդ սկզբունքով են անում: Սահմանադրական դատարանն էլ աշխատակարգային որոշում տվեց, չէ՞, ապրիլի սկզբին եւ մեկնաբանեց անուղղակի, որ սա ուղղակիորեն պետք է կապվի ընտրական գործընթացի հետ, եթե այդպես ուղղակի խոստումներ են տալիս, դա ոչ մի բան է: Հիմա ես էլ իմ գրասենյակով կրթաթոշակ եմ տալիս համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին՝ արդեն 10 տարի է: Հիմա ի՞նչ՝ դադարեցնե՞մ, չնայած կուսակցական չեմ, չեմ մասնակցում, բայց հնարավոր է, չէ՞, մի քննիչի մտքով անցնի, որ Տարոնն այս թիմում բարեկամ ունի, ընկեր ունի եւ գուցե դրա համար է անում: Այսինքն, չկա հանցակազմ, ուրիշ բան, որ քննիչները դա անում են քաղաքական պատվերի, վախեցնելու համար»:





Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի ԳՈՐԾՈՎ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՆ ՏՎԵԼ

2020 թվականի նոյեմբերի 9-ի գիշերը, երբ հայտնի դարձավ, որ Նիկոլ Փաշինյանը գաղտագողի ստորագրել, վրդովված մարդիկ, որոնք 44 օր լսել էին, որ «հաղթում ենք», դուրս եկան փողոց: Ինչպես բոլոր երկրներում են նման դեպքերում անում՝ մարդիկ սկսեցին ջարդել-փշրել, մտնել Ազգային ժողով, Կառավարություն, կառավարական առանձնատներ: Պատահաբար փողոցում հայտնված ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանին դաժան ծեծի ենթարկեցին: Նիկոլ Փաշինյանն այդ օրերին թաքնվել էր բունկերում եւ դուրս եկավ օրեր անց, երբ իրավիճակը հանդարտվեց: Այդ բոլոր միջադեպերով քրեական գործեր հարուցվեցին, եւ մինչ օրս քննչական մարմինները քննում են այդ օրվա իրադարձությունները:

2025-ի մայիսին՝ 5 տարի շարունակ ընթացող քննության շրջանակներում, Քննչական կոմիտեն, նոյեմբերի 9-ի իրադարձություններով, 9 հոգու ձերբակալեց: Այդ ժամանակ ՔԿ-ն նրանց նկատմամբ միջնորդություն էր ներկայացրել դատարան՝ խափանման միջոց կալանավորում ընտրելու: Պարզ չէր, թե 5 տարի անց ինչ նոր հանգամանքներ էր պարզել ՔԿ-ն, եւ ինչու էին թարմացրել պատերազմի եւ պարտության հետ առնչվող այդ վարույթն ու ընդլայնել մեղադրյալների շրջանակը:

Իրավապահ համակարգում խոսում էին, որ այդ նոր ձերբակալությունները հերթական շոուն ապահովելու ծրագրի մասն են կազմում: Քաղաքական հրահանգ է իջեցվել բոլոր իրավապահ մարմիններին՝ բռնել, մեղադրել, փակել, վախեցնել ընդդիմությանը եւ իշխանափոխության մասին երազողներին: Ի վերջո, պարզ է, որ 2020 թվականի նոյեմբերի 9-ի դեպքերի մասնակիցները, մեծ հաշվով, իշխանափոխություն անելու էին դուրս եկել: 2025-ի գարնանը, իրավապահների տարեկան զեկույցների քննարկումների ժամանակ, ՔՊ-ական պատգամավորները նաեւ նոյեմբերի 9-ի դեպքերի մեղավորներին հայտնաբերելու մասին էին խոսում, եւ ՀՀ գլխավոր դատախազը, Քննչական կոմիտեի նախագահը, հավանաբար, այդ ելույթներն ուղիղ հրահանգ էին համարել՝ ուղղված իրենց: Ձերբակալված 9 անձից եւ ոչ մեկին դատարանը 2025-ին չկալանավորեց՝ մերժեցին Քննչական կոմիտեի միջնորդությունները: Ի դեպ, նշված 9-ից բացի, հետո եւս 2 տասնյակ անձի բռնեցին եւ ներկայացրին կալանքի, որոնց մասով եւս դատարանները մերժեցին կալանք տալու միջնորդությունները: Պարզ է, որ մեղադրանքներն օդ էին՝ անհիմն, եւ անգամ իշխանության բուռն շահագրգռությունը չօգնեց, որ մի քանի հոգու կալանք տան՝ շոուն ապահովելու նպատակով:

9 հոգուն առնչվող քրեական գործը հետո անջատվեց եւ ուղարկվեց տարբեր դատարաններ՝ քննության: Անջատված մասով 4 մեղադրյալի՝ Գեւորգ Ղազարյանի, Հրաչյա Զաքարյանի, Մացակ Արամյանի եւ Սամվել Մնացականյանի վերաբերյալ գործը մտել էր դատարան եւ քննվում էր դատավոր Դավիթ Արղամանյանի կողմից: Նրանց՝ բոլորին, մեկ մեղադրանք էր առաջադրված. «Մասնակցել են զանգվածային անկարգություններին, վնասել գույք»: Նրանցից մեկի նկատմամբ բացակայելու արգելք էր կիրառվել, մյուս 3-ի նկատմամբ՝ վարչական հսկողություն: 10 ամիս տեւած դատաքննությունից հետո, «Հրապարակ»-ի տեղեկություններով, օրեր առաջ դատավոր Արղամանյանը կարդացել է 4 երիտասարդի դատավճիռը՝ բոլորին թողնելով ազատության մեջ: Ղազարյանին, Զաքարյանին, Արամյանին եւ Մնացականյանին դատապարտել է 4 տարվա ազատազրկման՝ պատիժը պայմանականորեն չկիրառելով եւ սահմանելով 5 տարվա փորձաշրջան:

Պարզեցինք, որ մեղադրյալները դատախազության հետ համաձայնության են եկել, ընդունել իրենց մեղադրանքը: Պաշտպան **Վահագն Մարտիրոսյանը** մեզ հետ զրույցում ասաց. «Համաձայնության վարույթով է եղել, իմ պաշտպանյալը համաձայնել է մեղադրանքի հետ, մեղադրանքն ընդունել է, այդ հիմքով դատարանը դատավճիռ է կայացրել, այսինքն՝ համաձայնություն է կնքվել դատախազության հետ: Դատարանը համաձայնության վարույթ սկսում է՝ օրենքը նախատեսում է այն սկսել միայն նախապատրաստական փուլում, բուն դատաքննության չեն անցել՝ համաձայնեցված վարույթի, կնքված համաձայնության պատճառով»: Մեր դիտարկմանը, թե ստացվում է, որ իր պաշտպանյալները համաձայն են մեղադրանքի հետ, որ դիտմամբ պետական գույքը ջարդուփշուր են արել, փաստաբանը պատասխանեց. «Ես սահմանափակված եմ իմ պաշտպանյալի ցուցումով եւ կնքված դատավարական փաստաթղթով, դրանից ավել տեղեկատվություն չեմ կարող տալ»:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԻՄ ՔԱՅԼԸ

ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԸ ԵՐԲԵՔ ԻՐԵՆ ԱՌԱՋԻՆ ՏԻԿԻՆ ՉԻ ՀԱՄԱՐԵԼ ՈՒ ՔՊ-Ի ՀԵՏ ԻՐԵՆ ՉԻ ԱՍՈՑԱՑՆՈՒՄ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Երեկ Աննա Հակոբյանը հրատապ ասուլիս էր հրավիրել, որ հայտարարի՝ պատրաստվում է դատի տալ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի համակարգող Դանիել Իոաննիսյանին եւ «Անկախ դիտորդ» դաշինքին, որոնք խախտել են իր իրավունքները, արատավորել են «Իմ քայլը» հիմնադրամի գործարար համբավը: Նա պահանջում է քրեական պատասխանատվության ենթարկել Իոաննիսյանին՝ անձի ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի ազատ իրականացումը խոչընդոտելու համար: Ասուլիսի մասնակիցներին արգելվեց այս թեմայից դուրս որեւէ հարց տալ Աննա Հակոբյանին: Իոաննիսյանը, ինչպես հայտի է, մեղադրում է «Իմ քայլը» հիմնադրամի տնօրենին՝ բարեգործության արգելքը խախտելու համար, եւ Վարչական դատարան է դիմել՝ պահանջելով 15 դրվագով վարչական պատասխանատվության ենթարկել նրան:

Թե ինչով է Իոաննիսյանը խոչընդոտել Աննա Հակոբյանի ընտրական իրավունքը, ասուլիսին մասնակցող լրագրողներով այդպես էլ չհասկացանք: Տպավորություն էր, թե Աննան մի քանի օրենսգիրք է վերցրել, գնացել նստել է Օպերայի այգու նստարանին, որտեղ սիրում է նկարվել, ու իրար հետեւից կարդում է դրանք՝ իրեն պատկերացնելով տուժողի, զոհի դերում: Կարդացել է Սահմանադրության 7-րդ հոդվածը՝ քվեարկության գաղտնիության իրավունքի վերաբերյալ, Ընտրական օրենսգրքի 4-րդ հոդվածը՝ ազատ ու կամավոր ընտրության մասին, ու խղճացել է ինքն իրեն: «Ոչ ոք իրավունք չունի պարտադրել ընտրողին՝ քվեարկելու որեւէ թեկնածուի, կուսակցության, կուսակցություններին դաշինքի օգտին կամ դեմ, ինչպես նաեւ՝ հարկադրել ընտրողին՝ մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին»,- ասում էր նա, ու այդ «ոչ ոքը» Դանիելն է: Հետո երեւի կարդացել է Մարդու իրավունքների կոնվենցիան ու երրորդ հոդվածում հետաքրքիր միտք գտել՝ ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգումների կամ անմարդկային, նվաստացուցիչ վերաբերմունքի, ինչը, ըստ ՄԻԵԴ-ի պրակտիկայի, ներառում է նաեւ հոգեբանական ճնշման, նվաստացման ձեւերը: Հետո բացել է կոնվենցիայի 10-րդ հոդվածը՝ արտահայտվելու ազատության իրավունքի մասին, ու հասկացել է, որ, ախր, իր այս իրավունքն էլ է խախտվել: Հետո հիշել է, որ ՄԱԿ-ը կոնվենցիա ունի՝ կանանց իրավունքների մասին, որից ինքը՝ որպես կին, կարող է օգտվել: Կա փաստաթուղթ, որը կոչվում է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա»: «Խախտվել են Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի համապատասխան դրույթները, որոնք քրեականացնում են ցանկացած հիմքով բռնությունը, ներառյալ՝ հոգեբանական եւ հուզական բռնության ձեւերը, որոնք կարող են արտահայտվել սպառնալիքի, հարկադրանքի կամ մանիպուլյացիայի միջոցով եւ դիտարկվում են որպես կանանց նկատմամբ խտրականության դրսեւորում»,- ասում էր նա:

Դանիել Իոաննիսյանը նորմալ է վերաբերվում Աննա Հակոբյանի հնչեցրած մեղադրանքներին եւ իր դեմ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու հայտարարությանը: «Լրիվ նորմալ է, որ մարդու դեմ իրավական գործընթաց ենք սկսել, նա էլ փորձում է մեր դեմ իրավական գործընթաց սկսել: Իր սահմանադրական իրավունքն է... բայց մի քիչ տարօրինակ են իր հայտարարությունները խոշտանգման եւ խտրականության վերաբերյալ: Մի քիչ տարօրինակ են նրա հայտարարությունները եւ զարմացնող»,- մեր հարցին պատասխանեց Իոաննիսյանը:

- Ընտրություններին ազատ մասնակցելու նրա իրավունքը Դուք ինչո՞վ եք խախտել, կամ՝ քվեարկության գաղտնիությանը վերաբերող դրույթներ է առաջ քաշում:

- Ոչնչով չեմ խախտել:

- Մարդիկ կասկածում են, որ Աննա Հակոբյանն ու Դանիել Իոաննիսյանը նախընտրական խաղ են սկսել, որ վերջում դատարանը մի քանի հազար տուգանի Աննային, ու ստեղծվի դեմոկրատական երկրի իմիջ: Սրան ինչպե՞ս եք վերաբերվում:

- Անլուրջ: Մարդկանց մտքով չի անցնում մի հասարակ բան՝ դիտորդական առաքելությունը տեսել է երեւույթը, համարել ենք, որ այդտեղ խախտում կա, արել ենք այն, ինչը որ դիտորդական առաքելությունը պետք է անի, անկախ նրանից, թե անձամբ ինչպես ենք վերաբերվում Աննա Հակոբյանին՝ լավ, թե վատ: Տեսել ենք, արձանագրել ենք: Կներեք, էլի, պետք չէ մեզ չափել այն մարդկանց արշինով, որոնք իրենց նախընտրությունների բերումով ինչ-որ բան անում են կամ չեն անում: Ես մարդ եմ, որը, երբ խախտում էր արել կորոնավիրուսի ժամանակ, գնացել է ոստիկանություն ու առաջարկել է իրեն տուգանել, որովհետեւ ես խախտում եմ արել:

Նկատենք, որ ասուլիսի մասին հայտարարվել էր դրանից մի քանի ժամ առաջ: Շատ լրագրողների, որոնք եկել էին ներկա գտնվելու, մետաղորսիչների մոտից հետ էին ուղարկում Աննա Հակոբյանի թիկնապահները, քանի որ նրանք «հավատարմագրված չէին»: Իսկ նրանք, որոնց ներս թողեցին, Աննա Հակոբյանի հայտարարություններից ուշքի չէին գալիս՝ մի հարցը 100 անգամ տարբեր ձեւակերպումներով տալիս էին:

Փաստորեն, Աննա Հակոբյանը գտնում է, որ ինքը եւ իր «Իմ քայլը» հիմնադրամը որեւէ կերպ չեն ասոցացվում ՔՊ-ի հետ, ինքը եւ հոգաբարձուների խորհրդի անդամները պատգամավորի թեկնածուներ չեն, հետեւապես նախընտրական շրջանում բարեգործությամբ զբաղվելու իրավունք ունեն: Պատասխանելով «Հրապարակի» հարցին, թե ինչու չի ուզում հետաձգել իր հիմնադրամի բարեգործական ծրագրերը, պատասխանեց, որ դրա համար որեւէ պատճառ չի տեսնում, քանի որ հիմնադրամը չի խախտում ՀՀ օրենսդրությունը: Կարեւոր չէ, որ հիմնադրամի անունը ՔՊ-ի նախկին դաշինքի անվանումն է: Կարեւոր չէ, որ ինքը Փաշինյանի կինն է, համենայնդեպս, նրա հետ է ապրում: Կարեւոր չէ, որ օգտվում է պետության տրամադրած պետական պաշտպանությունից, որ պետությունը նրան մեքենա է տվել, որ նա մի քանի օր առաջ Գյումրիում ՔՊ-ի քարոզչության ժամանակ Նիկոլի կողքին էր: Այս ամենը չի նշանակում, որ ինքը մասնակցում է նախընտրական քարոզարշավին, եւ եթե հանկարծ ՀՀ քաղաքացիները նրան մեղադրեն ՔՊ ասեղը թելելու մեջ, կասի, որ խախտում են իր ազատ ընտրության իրավունքը, եւ կդիմի դատախազություն, որ ասողի դեմ գործ հարուցեն:

Աննա Հակոբյանը, ինչպես միշտ, նաեւ դասեր էր տալիս լրագրողներին, առաջարկում էր հիմնադրամի հաշվին Փարիզ ուղարկել՝ կուրսերի, մեղադրում էր «սխալ» հարցեր տալու համար: Կատակ-հարցին, թե հնարավո՞ր է, որ իր ձայնը տա, ասենք, Ռոբերտ Քոչարյանին, պատասխանեց, թե չի կարելի նման հարց տալ. «Նման հարց հնչեցնելը կոպտագույն խախտում է իմ ու ձեր իրավունքները պաշտպանող օրենսդրության, որոնք մենք պետք է փայփայենք»: Մեր հարցին, թե ինչու նույն ջանասիրությամբ չէր պաշտպանում մեկ այլ կնոջ՝ Գոհար Ղումաշյանի իրավունքը, որին մեկ ձայնագրության հիմքով մեղադրանք են առաջադրել, թեեւ նա էլ թեկնածու չէ եւ միշտ է բարեգործությամբ զբաղվել, ասաց. «Դուք Ձեր հարցի մեջ ասեցիք՝ ձայնագրություն, կուսակցության անդամ է այդ անձնավորութունը, դրանք նյուանսներ են, կին է՝ ի՞նչ կապ ունի, որ կին է, համեմատել ու այդ հարցն ինձ ուղղելը ճիշտ չէ»:

Եվ օրվա սենսացիան. Աննա Հակոբյանը հայտարարեց, թե ինքն իրեն առաջին տիկին չի համարում ու երբեք չի ունեցել նման կարգավիճակ: «Առաջին տիկնոջ կարգավիճակը դա էնպիսի մի սիմվոլիկ, հայեցողական, քարոզչական... ես դրա իմաստը լավ չեմ հասկանում»: Բա ինչո՞ւ է իր մասին միշտ գրում՝ առաջին տիկին: «Որովհետեւ բոլորն այդպես են կոչում»: Խոսքը փոխելու հարցում Աննան ու Նիկոլն իրար, ինչ խոսք, լավ են գտել:

ԱՅԼԵՎՍ ԿԱՐԻՔ ՉՈՒՆԵՆ ԹԱՔՑՆԵԼՈՒ ԻՐԵՆՑ ԴԱՎԱԴԻՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հարցազրույց քաղաքագետ, գրականագետ **Անուշ Սեդրակյանի** հետ

- 2021-ի ընտրություններից առաջ ՔՊ-ն բավականին հայանպաստ թվացող ծրագիր էր ներկայացրել՝ Արցախի դեօկուպացիա, գերիների վերադարձ, սահմանների ամրապնդում եւ այլն: Այժմ բացահայտ խոսում են իրենց դավադիր ու չար նպատակների մասին: Անգամ ծրագրում են գրում՝ Ադրբեջանի թելադրանքով Սահմանադրություն փոխել, եկեղեցու դեմ ասպատակում, մասնավորապես՝ ուզում են կաթողիկոսին հեռացնել եւ այլն: Ինչո՞ւ է ՔՊ-ն այս անգամ բացահայտ գործում:

- Անցյալ անգամ քողարկում էին բոլոր խնդիրները, նախ՝ որովհետեւ աշխարհաքաղաքական պայմանավորվածություններն այդքան ամուր չէին, եւ ժողովրդի դիմադրությունը, բարոյահոգեբանական վիճակն այսքան կոտրված չէր: Դրանք ստուգվում են տարբեր միջոցառումներով՝ համերգներ, օվերտոնի պատուհաններ, որոնք բացվում են, հայատյաց ու ապազգային լոգունգների կիրառում եւ նման բառապաշարով հաղորդակցվող աջակիցների ի հայտ գալ: Հետո՞ ինչ, որ նրանց բարոյահոգեբանական վիճակն ու ինտելեկտը միջինից ցածր են, դա ոչինչ չի նշանակում: Նրանք կան եւ ընտրազանգված են: Իշխանությունները հենվում են աշխարհաքաղաքական պայմանավորվածությունների, բացարձակ զիջողականության եւ իրենց ընտրազանգվածի ամենակերության վրա, նրանք այլեւս կարիք չունեն թաքցնելու իրենց բուն դավադիր նպատակները:

- Ինչ տեղի ունեցավ ապրիլի 25-ին՝ ՀՀ քաղաքացու օրը:

- Այդ միջոցառումը բացարձակ նույն ոգով էր, ինչ նախորդ բոլոր միջոցառումները: Դեռեւս հռոմեական ժամանակներից ամբոխին գրավում էին «հացը եւ տեսարանները»: Քանի որ նախընտրական շրջան է, այս անգամ հացը տրվել էր վճարովի, որպեսզի այն որպես ընտրակաշառք չդիտվի, բայց բոլոր նրանք, ովքեր վաղուց չունեն բարոյահոգեբանական դիմադրություն եւ ունեն հեղհեղուկ արժեքային համակարգ, շատ հեշտ գնացին այդ «անվնաս» գործարքին: Մտածում են՝ դե ի՞նչ ենք անում որ, ուղղակի գնում ենք համերգ դիտելու, հո սա քաղաքական միջոցառում չէ՞: Սակայն մենք տեսնում ենք, որ իրականում արժեքային համակարգ չունեցող տեսակը դատապարտված է: Կարծում եմ, որ եթե մենք ունենայինք ազգային արժեհամակարգ, իրավիճակը կլիներ այլ: Ֆրանսիայում եթե ժամանակին չլինեին կապիտուլյացիոն տրամադրություններ, Ֆրանսիան չէր ենթարկվի կապիտուլյացիայի: Ֆրանսիան իր ազգային ինքնությունը վերագտավ բացառապես արտաքին աշխարհաքաղաքական գործոնների ազդեցության տակ, նույն Չերչիլի եւ մյուսների ազդեցության ներքո: Այժմ աշխարհաքաղաքական պրոցեսները մեզ թելադրում են լրիվ հակառակը, իսկ մենք չունենք ներքին բարձր արժեհամակարգ:

- Ծրագրում գրել են, որ համագործակցելու են սփյուռքի այն կառույցների հետ, որոնք ունեն պետականամետ դիրքորոշում: Այսինքն՝ իրենց չքննադատող կառույցների հետ:

- Հայաստանում վաղուց պետության եւ իշխանության մեջ որոշ ուժեր դրել են հավասարություն: Բոլոր նրանք, ովքեր այդ ուղեծրում են, նպաստում են երկրի քայքայմանը: Կլինեն սփյուռքահայության ներկայացուցիչներ, թե որոշ հոգեւորականներ, նրանք իրենց այսրոպեական օգուտի համար մի ողջ ազգային պատմություն են ոչնչացնում: Դե, իսկ իրեն քննադատողների հետ ինչո՞ւ պետք է համագործակցի՝ քննադատողներին ամեն գնով հեռացնում են իրենց ճանապարհից:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

70 ՏԱՐԵԿԱՆՈՒՄ ԵՎՍ ԿԱՐԵԼԻ Է ԾԱՌԱՅԵԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Նիկոլ Փաշինյանին եւ նրա իշխանությանը կարելի է ծառայել նաեւ աշխատանքից հեռացվելու պարագայում: Կարելի է նրան ծառայել նաեւ քննադատելով, նույնիսկ՝ շատ սուր եւ օբյեկտիվ: Փաշինյանի իշխանությունում պաշտպանության նախարար աշխատած Վաղարշակ Հարությունյանը եւ Արշակ Կարապետյանը որոշել են նրան պաշտպանել՝ ընտրություններին մասնակցելով: Այսօր նրանք Փաշինյանին ծառայում են, ծառայություն են մատուցում խորհրդարանական ընտրություններին մասնակցելով, ընդդիմադիր ընտրազանգվածից ձայն փախցնելով: Համենայնդեպս, փորձելու են, որքանով որ կստացվի:

Երկուսն էլ իբրեւ թե ռուսամետ են, նշանակում է՝ ձայն պետք է փախցնեն այն ընտրազանգվածից, որը Հայաստան- Ռուսաստան դաշնակցային հարաբերությունների պահպանման կողմնակից է: Հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների պահպանումը հիմա Հայաստանի թրքացման եւ թրքահպատակեցման հիմնական խոչընդոտն է, ուստի հենց դրա դեմ է Փաշինյանի եւ նրա իշխանության հիմնական պայքարը, Հայաստանը դուրս բերել Ռուսաստանի տնտեսական, պաշտպանական, արժեքային ընդհանրության տարածքից, որից հետո թրքացումը տեղի կունենա ինքաբերաբար: Այդ նպատակով Փաշինյանն իր նախկին նախարարներին որոշել է գործուղել հակառուսական պայքարի ճակատ՝ մասնատելու եւ փոշիացնելու այս ընտրազանգվածը:

1956 թվականին ծնված Վաղարշակ Հարությունյանը, որի 70 տարին լրանում է այսօր՝ ապրիլի 28-ին, ռազմական կրթություն է ստացել Ռուսաստանում, զինվորական կարիերան սկսել է այդ երկրում. սկզբում եղել է ԱՊՀ միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատարության շտաբի պետի տեղակալ, 1994-1999 թթ. ԱՊՀ մասնակից-պետությունների ռազմական համագործակցության կոորդինացման շտաբի պետի տեղակալ, Հայաստանի զինված ուժերի ներկայացուցիչ: 1999-ի խորհրդարանական ընտրություններից հետո, երբ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը դարձավ վարչապետ, Հարությունյանին իր կառավարությունում պաշտպանության նախարար նշանակեց, բայց նրա դերը նոմինալ էր, քանի որ իրականում ՊՆ-ն շարունակում էր ղեկավարել Վազգեն Սարգսյանը: Հարությունյանը Վազգեն Սարգսյանի ստվերից դուրս եկավ հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունից հետո, երբ պահպանեց պաշտոնը՝ շարունակելով պաշտոնավարել Սարգսյանի եղբոր՝ Արամ Սարգսյանի կառավարությունում, սակայն մի քանի ամիս անց պաշտոնանկ արվեց Ռոբերտ Քոչարյանի կողմից եւ դարձավ ընդդիմություն: Հարությունյանի աստղը կրկին սկսեց փայլել Փաշինյանի՝ իշխանության գալուց հետո, ավելի կոնկրետ՝ Արցախյան 44-օրյա պատերազմում Հայաստանի պարտությունից եւ կապիտուլյացիայի ստորագրումից հետո: Ընդամենը 10 օր հետո՝ նոյեմբերի 20-ին, նա կապիտուլյանտից ստացավ պաշտպանության նախարարի պաշտոնը եւ մեկ ամիս անց Ադրբեջանին հանձնեց Գորիս-Կապան ռազմավարական նշանակության ճանապարհը՝ ցույց տալով, որ Փաշինյանի իսկական գաղափարակիցն է ու կարող է նրա թիմակիցը լինել: Շատ չանցած՝ 2021 թ. հուլիսի 20-ին, Փաշինյանը նրան ազատեց Պնախարարի պաշտոնից, բայց անգործ չթողեց՝ 2022թ. հունվարի 5-ին նա նշանակվեց ՌԴ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան եւ այդ պաշտոնում մնաց 2 տարուց մի փոքր ավելի: Սակայն դեսպանի պաշտոնում այդպես էլ որեւէ նշանակալի գործունեություն չծավալեց, հայ-ռուսական հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ որեւէ քայլ չձեռնարկեց: Ընդհակառակը. նրա՝ դեսպան աշխատելու օրոք այդ հարաբերությունները վատթարացան, Հայաստանը սառեցրեց իր անդամակցությունը ՀԱՊԿ-ին, եւ Հարությունյանը ողջունեց այդ որոշումը: Հիմա նրան այլ գործ են հանձնարարել՝ մասնակցել ընտրություններին եւ ձայն գողանալ:

Վաղարշակ Հարությունյանին փոխարինեց Արշակ Կարապետյանը, որը Պնախարար նշանակվեց 2021 թ. օգոստոսի 2-ին, իսկ 2021 թ. նոյեմբերի 15-ին պաշտոնանկ արվելուց որոշ ժամանակ հետո հայտնվեց Մոսկվայում, բայց ոչ թե դեսպանի, այլ՝ Փաշինյանի անխնա քննադատի, ընդդիմադրի կարգավիճակով: Հայաստանում ստեղծեց Համահայկական ճակատ շարժումը, հետո դրա հիմքի վրա կուսակցություն գրանցեց եւ հայտարարեց, որ մտադիր է Հայաստանը փրկել Փաշինյանից՝ մի մարդուց, որին երեքուկես տարի անմնացորդ ծառայել էր. սկզբում՝ խորհրդականի, ԶՈՒ Գլխավոր շտաբի պետի տեղակալի, հետո՝ արդեն Պնախարարի պաշտոնում: Կարապետյանը 44-օրյա պատերազմի, կապիտուլյացիայի, Ադրբեջանին ճանապարհ ու այլ տարածքներ հանձնելու ողջ ժամանակահատվածում եղել է Փաշինյանի թիմի անդամ: Արշակ Կարապետյանի քաղաքական գործունեությունը նույնքան փայլուն էր, ինչպեսեւ՝ ռազմականը. 2025-ին նրա ղեկավարած «Համահայկական ճակատ» կուսակցությունը մասնակցեց Վաղարշապատ համայնքի ՏԻՄ ընտրություններին եւ 8 մասնակիցների մեջ գրավեց վերջին տեղը՝ 69 հազար 924 ընտրողից ստանալով 295 ձայն: Այդ ընտրություններում Կարապետյանն ընդդիմությունից կարողացավ գողանալ այդքան ձայն՝ քիչ է, բայց էլի վատ չէ: Սա է այս մարդու եւ նրա կուսակցության հանրային աջակցության աստիճանը:

Վաղարշակ Հարությունյանը գլխավորում է Ռեֆորմիստների կուսակցության ցուցակը, իսկ Արշակ Կարապետյանի անունը թեեւ որեւէ ընտրական ցուցակում չկա, բայց նրա ստեղծած «Համահայկական ճակատ» կուսակցության նախագահը, փոխնախագահը եւ կուսակցության մյուս երեք անդամները ներկայացված են ԴՕԿ կուսակցության ցուցակում: Ծանոթներիցս մեկը պատմում է, որ երբ սրճարանում փորձել է Վաղարշակ Հարությունյանին համոզել, որ ինքը գնում է քաղաքական ինքնասպանության, նա վստահ պատասխանել է, որ երկրի մտավորականությունը եւ զինվորականությունն իրեն ձայն են տալու: Արշակ Կարապետյանին եւս փորձել են բացատրել, որ իր մասնակցությունն ընտրություններին իրեն միայն ամոթ եւ արժանապատվության կորուստ է բերելու, ինքը դրանով աջակցում է Նիկոլ Փաշինյանին, բայց՝ ապարդյուն:

Այս մարդիկ չեն շարժվում կամ առաջնորդվում բանականությամբ, շարժվում են հրամանով, եւ, ըստ ամենայնի, այդ հրամանն արձակվում է Փաշինյանի կամ նրա աշխատակազմի ղեկավարի աշխատասենյակից: Նրանց համար հատուկ ռուսամետ գործչի համբավ են ձեւավորել՝ մեկին Ռուսաստանում դեսպան նշանակելով, մյուսին Մոսկվա գործուղելով եւ Մոսկվա սիթիում աշխատասենյակ վարձելով: Հիմա եկել է նրանց վրա ծախսված փողի հետվերադարձի ժամանակը, իսկ փոխհատուցումը կարող է լինել միայն մի ձեւով՝ ընդդիմադիր ընտրողների ձայները գողանալով, փոշիացնելով:

ԿԸՀ դիմած 19 կուսակցություններից առնվազն 13-14-ը ընտրություններին մասնակցում է նույն շարժառիթով եւ նույն տրամաբանությամբ՝ ստեղծել նախընտրական աղմուկ, նախընտրական բազմակարծության տպավորություն՝ թույլ չտալով, որ ընտրողը հասկանա, թե ինչի շուրջ է պայքարը, չկարողանա առաջնայինը տարբերել երկրորդականից, երրորդականից: 2021 թ. ընտրությունների ժամանակ փոշիացվեց 200 հազարից ավելի ընտրողի ձայն, դա իշխանությանը հաղթանակ ապահովեց, հիմա փորձելու են կրկնել՝ մաշվածներին հեռացնելով եւ խաղի մեջ մտցնելով նոր անուններ եւ թարմ ուժեր:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՄԻ ԲՐԴՈՒՃ ՔՅԱԲԱԲՈՎ ԾԱԽԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ԲՈԼՈՐ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր զրուցակիցն **Արտաշես սարկավագ Աջապահյանն** է:

- Ապրիլի 25-ին իշխանությունները Երեւանի կենտրոնում քաղաքացու օրն էին նշում: Սկզբում՝ խորոված, հետո՝ համերգ, երգ ու պար: Շատերն այս ամենը քննադատում են, քանի որ դա տեղի ունեցավ Ցեղասպանության զոհերի հիշատակի անմիջապես հաջորդ օրը: Սակայն, ի վերջո, եթե պատկերացնենք, որ նույն միջոցառումը տեղի է ունենում մեկ այլ ամիս, դրանից փոխվո՞ւմ է հարցի էությունը: Ըստ Ձեզ՝ ո՞րն էր մեր ժամանակների «հաց եւ տեսարանների» նպատակը:

- Այս ամենի նպատակը, ես կարծում եմ, մարդկանց սպառող դարձնելն է: Կենդանական բնազդների մակարդակի զանգվածի են ձգտում հասցնել մարդկանց, որպեսզի մարդիկ միայն ուտելու մասին մտածեն, ձեռքի հետ էլ՝ մյուս կենդանական բնազդների: Նման մարդիկ հեշտ են կառավարվում: Իհարկե, ամբողջապես չի ստացվում իշխանությունների մոտ, սակայն ոմանց իսկապես կարողանում են դարձնել այդպիսին: Տխուր է, որ հայ ազգից փորձում են բիոմասսա ստանալ, որն անկարող կլինի մտածելու, ծայրահեղ դեպքում՝ բիոզանգվածը կարող է մտածել բացառապես իր պահանջմունքների բավարարման մասին, այդ թվում՝ կենսաբանական: Հոգեւոր պահանջմունքների իսպառ բացակայության են փորձում հասնել: Մարդկանց տանում են նրան, որ հոգեւոր պահանջմունքներ չունենան: Ծաղրանկարներ կան, որ շունը կատվի նկարի ետեւից է անդադար վազում, կամ՝ սկյուռին գցում են պտտվող օղակի մեջ, եւ նա չի կարողանում դուրս գալ…. մեր ժողովրդին այդ նույն իրավիճակի մեջ են փորձում գցել: Այդպես հեշտ կառավարելի են մարդիկ դառնում: Հակառակ դեպքում՝ ժողովուրդը կարող է սկսել ավելի լուրջ թեմաների մասին մտածել, լուրջ հարցեր քննարկել, հայրենասեր ու աստվածասեր դառնալ, ինչը կբարդացնի իշխանությունների վիճակը: Դրա փոխարեն՝ ուրախություն, խորոված, քեֆ ու խրախճանք, ստամոքս լցնել: Պատահական չէ, որ խորոված ու քյաբաբ են վաճառում մարդկանց: Մնում է մարդկանց մյուս բնազդներն էլ այդպես արթնացնեն, եւ կլինի վերջը՝ Սոդոմ գոմոր:

- Երբ մարդիկ այդ երեւույթները քննադատում են, իշխանությունն իր գրպանում մի պատրաստի պատասխան ունի պահած՝ ուզում եք միայն սգա՞լ: Ինչպե՞ս տարբերել այս երեւույթները միմյանցից:

- Իսկ ի՞նչ անել, բոլոր սրբությունները, կրոնը, արժեքներն ու պատմությունն արժե՞ ծախել մի բրդուճ քյաբաբի դիմաց: Նման ձեւով մտածող մարդիկ այդպես են վարվել: Բնականաբար, այդպես մտածողների մեջ ոչ թե մարդն է խոսում, այլ քյաբաբն է խոսում: Այդտեղ ոչ թե մարդն է խոսում, այլ՝ ստամոքսը: Մանիպուլյացիաներ են անում իրականում, բայց ես կարծում եմ, որ շատերն այնքան են իրականությունից կտրվել, որ ուղղակի մտածում են այն, ինչն իրենց համար հաճելի է: Նրանք ամեն ինչ մոռացել են: Կան, չէ՞, մարդիկ, ովքեր ուրանում են իրենց ընտանիքը, երեխաներին, հետո թողնում գնում են տնից, հետո էլ արդարանում են, ասում են՝ դե հո ամբողջ կյանքում չէի՞ ծառայելու: Մոտավորապես նույն բանն է տեղի ունենում: Հիմա սրանք էլ ասում են՝ հո սաղ կյանքներս չէի՞նք սգալու: Մի սգացեք, ուղղակի տարրական հարգանք է, երբ հարազատդ մահանում է, չես գնում հանգուցյալի տուն, երաժշտություն միացնում ու պարում: Պատկերացնո՞ւմ եք՝ մարդը գնա բարեկամի տուն՝ ցավակցելու, երաժշտություն միացնի, սկսի պարել կամ խորոված ուտել:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆՏԵՍ ԿՈՐԱԾ 4 ՀԱԶԱՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑ Է ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*«Հրապարակի» զրուցակիցը Հարավային Կովկասի հետազոտական կենտրոնի տնօրեն **Ֆարհադ Մամեդովն** է, որը պարբերաբար Հայաստան այցելող Ադրբեջանի քաղհասարակության ներկայացուցիչներից է:*

- Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը եւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պարբերաբար արձանագրում են, որ մեր երկրների միջեւ խաղաղությունն արդեն փաստ է: Սկսել են առեւտրային կապեր հաստատվել, քաղհասարակության ներկայացուցիչներն են փոխայցելություններ անում Հայաստան եւ Ադրբեջան: Ադրբեջանական հասարակությունը կիսո՞ւմ է այդ տեսակետը, ինչպիսի՞ն է նրա արձագանքը:

- Ադրբեջանի եւ Հայաստանի առաջնորդների կողմից փաստացի խաղաղության հաստատման մասին հայտարարություններն էական ազդեցություն ունեն խաղաղության գործընթացի հանրային ընկալումների վրա: Նշվում են նաեւ կառուցողական քաղաքական երկխոսությունը եւ տնտեսական համագործակցությունը: Այս ոլորտները լիովին կախված են երկու կառավարությունների քաղաքական կամքից: Այնուամենայնիվ, հանրային մակարդակում խաղաղության համապարփակ ընկալում ձեւավորելու համար զգալի ժամանակ է պահանջվում: «Խաղաղության կամուրջ» նախաձեռնության մասնակիցներն իրենց երկրներում հանդիպումներ են անցկացնում քաղաքացիական հասարակության տարբեր շերտերի հետ, մասնակցում են լրատվամիջոցների քննարկումներին եւ սոցցանցերի մշտադիտարկում են անում: Այս հանդիպումների ընթացքում մենք կիսվում ենք մեր դիտարկումների արդյունքներով, եւ կարելի է վստահորեն ասել, որ ռազմական բախումների, զոհերի բացակայությունը եւ քաղաքական ու տնտեսական փոխազդեցության սկիզբը ընդունվում են ադրբեջանական եւ հայկական հասարակությունների մեծամասնության կողմից: Իհարկե, ադրբեջանական եւ հայկական հասարակությունները խաղաղության ընկալման, ապագա խաղաղության տեսլականի, խաղաղության օրակարգի վերաբերյալ իրենց առաջնահերթությունների եւ սպասումների հարցում տարբերություններ ունեն: Մեր ապագա գործունեության համար մենք հավաքագրում եւ համակարգում ենք կարծիքներն ու դիրքորոշումները: Պետք է նաեւ նշել, որ եւ Ադրբեջանում, եւ Հայաստանում խաղաղության օրակարգի տարբեր տարրերի նկատմամբ տարբեր սոցիալական շերտեր տարբեր պատրաստվածություն ունեն:

- Հայաստանում նախընտրական շրջան է, իսկ գործող իշխանությունների կարգախոսն այս փուլում՝ «տեր կանգնիր խաղաղությանը»: Բաքվից էլ է երբեմն հնչում, թե Փաշինյանի պարտության դեպքում խաղաղությունը կվտանգվի: Մի՞թե խաղաղությունն անձերով է պայմանավորված: Եթե այդպես է, ո՞րն է քաղհասարակության ներկայացուցիչների շփումների իմաստը:

- Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ համաձայնեցված խաղաղության օրակարգը երկկողմանի է եւ բաղկացած է երկու ստորագրված փաստաթղթերից՝ համատեղ հռչակագրից եւ խաղաղության պայմանագրի նախաստորագրված տեքստից: Ստեղծվել է սահմանի սահմանազատման միջկառավարական հանձնաժողով: Բացի այդ, կան բանավոր համաձայնություններ, որոնք հիմք են հանդիսանում դիվանագիտական փոխգործակցության, տնտեսական համագործակցության եւ քաղաքացիական հասարակության երկխոսության պայմանների ստեղծման համար: Այս ամենը ձեռք է բերվել նախագահ Իլհամ Ալիեւի եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մակարդակով: Եվ, իհարկե, այս գործընթացում անհատների դերը կարեւոր է: Ներկայում Հայաստանի առաջատար ընդդիմադիր կուսակցություններն իրենց ծրագրային հայտարարություններում քննադատում են ստորագրված փաստաթղթերը, որոնք կազմում են խաղաղության օրակարգի հիմքը: Սա նշանակում է, որ եթե նրանք գան իշխանության, կարող են վերանայել ընդունված փաստաթղթերի տեքստերը, ինչը կհանգեցնի խաղաղության գործընթացի դադարեցման եւ հետագա վատթարացման: Այս համատեքստում դուք, որպես հայկական լրատվամիջոցների ներկայացուցիչներ, կարող եք հարցնել հայ ընդդիմության առաջնորդներին՝ ստորագրված փաստաթղթերի եւ խաղաղության օրակարգի շրջանակներում ընդունված բանավոր համաձայնությունների նկատմամբ իրենց վերաբերմունքի մասին: Այս պատասխանները կորոշեն՝ արդյոք խաղաղության գործընթացը կախված է Փաշինյանի անձից, թե ոչ:

- ԱՄՆ նախագահի հատուկ ներկայացուցիչ Սթիվ Ուիթքոֆը պնդում է, որ Թրամփի շնորհիվ Հայաստանն ու Ադրբեջանը լավ ընկերներ են դարձել, Ալիեւն ու Փաշինյանը՝ նույնպես:

- Դա ԱՄՆ նախագահ Թրամփի եւ նրա անձնական ներկայացուցիչ Սթիվ Ուիթքոֆի դիրքորոշումն է: Այսօր կարելի է ասել, որ Ադրբեջանի եւ Հայաստանի առաջնորդների միջեւ հարաբերություններն աշխատանքային, կառուցողական եւ պրագմատիկ են: Կա մշտական շփում եւ կարծիքների բաց փոխանակում: Ինչպես երեւում է առաջնորդների հայտարարություններից, կա համաձայնեցված խաղաղության օրակարգ: Սա իրականացվում է իրավիճակի համատեղ ըմբռնման եւ երկրների ազգային շահերի հետապնդման միջոցով:

- Հայաստանում համոզված են՝ ՀՀ ներկայիս վարչապետի վերընտրությունը ձեռնտու է Ադրբեջանին, քանի որ, անկախ ամերիկյան վարչակազմի հայտարարություններից, Փաշինյանը մշտապես կատարում է Բաքվի բոլոր պահանջները: Բայց չէ՞ որ հայերն էլ արդարացի պահանջներ ունեն՝ Ադրբեջանի բանտերից հայ գերիների ազատում, ՀՀ ինքնիշխան տարածքից ադրբեջանական զորքերի դուրսբերում եւ այլն:

- Ադրբեջանի համար կարեւոր է Հայաստանի դիրքորոշման պարզությունը եւ համաձայնեցված խաղաղության օրակարգի իրականացման կանխատեսելիությունը: Հայաստանում խորհրդարանական ընտրությունները կպատասխանեն Ադրբեջանի այս սպասումներին: Պաշտոնական բանակցային օրակարգը ներառում է մեծ թվով զգայուն թեմաներ եւ խնդիրներ: Մեր հասարակություններին հուզող տարբեր հարցեր քննարկվում են նաեւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջեւ երկխոսություններում՝ ինչպես միմյանց միջեւ, այնպես էլ պաշտոնյաների հետ հանդիպումների ժամանակ: Ձեր նշած հարցերը բարձրացնում են Հայաստանի մասնակիցները: Պետք է նաեւ հասկանալ, որ հակամարտության հետեւանքները չեն կարող շտկվել: Անհետ կորած Ադրբեջանի մոտ 4 հազար քաղաքացիների ճակատագիրը հրատապ հարց է ադրբեջանական հասարակության համար: Հայաստանում քաղաքական գործիչները վերջերս պնդում էին, որ տեղեկություններ ունեն նրանց թաղման վայրերի մասին, բայց չեն տրամադրում այդ տեղեկատվությունը: Այլ կերպ ասած, կան հարցեր, որոնք բացասաբար են անդրադառնում ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Հայաստանում խաղաղության գործընթացի վրա: Այս հարցերից որոշների համար գոյություն ունեն մեխանիզմներ, օրինակ՝ միջկառավարական սահմանային հանձնաժողովը, որը շարունակում է իր աշխատանքը: Այնուամենայնիվ, կան հարցեր, որոնց համար մեխանիզմներ գոյություն չունեն: Սրանք այն օբյեկտիվ պայմաններն են, որոնց շրջանակներում ձեւավորվել եւ շարունակվում է խաղաղության օրակարգը:

- ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը չի կարողանա մարդկանց մոբիլիզացնել. Փաշինյանի շանսերն ավելի շատ են՝ հայտարարել է Ադրբեջանի նախկին ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը: Նա քննադատել է նաեւ ընդդիմության մյուս առաջնորդներին: Սա մեր երկրի ներքին գործերին միջամտություն չէ՞: Արդյո՞ք հենց նման հայտարարությունները չեն խաթարում փոխվստահությունն ու խաղաղության գործընթացը:

- Էլմար Մամեդյարովը մասնավոր անձ է, Ադրբեջանի քաղաքացի, եւ սա ընդամենը մեկնաբանություն է Հայաստանում կայանալիք խորհրդարանական ընտրությունների եւ այն քաղաքական գործիչների վերաբերյալ, որոնց հետ Էլմար Մամեդյարովն անձամբ ծանոթ է եղել: Հայաստանի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ մեկնաբանությունները բազմաթիվ են, եւ դրանք արվում են Ռուսաստանում, Եվրոպայում, ԱՄՆ-ում եւ Իրանում: Ավելին, այդ երկրների պաշտոնյաներն արտահայտում են իրենց դիրքորոշումները: Ես կարծում եմ, որ Էլմար Մամեդյարովի հայտարարություններն անհամեմատելի են Հայաստանի հասարակական կարծիքի վրա իրենց ազդեցությամբ Ռուսաստանի, ԵՄ եւ ԱՄՆ պաշտոնյաների հայտարարությունների հետ: Ընտրական գործընթացի վրա արտաքին ազդեցության համատեքստում ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել արտաքին գործիչների գործողություններին, քան մասնավոր անձանց հայտարարություններին:

Արա ԱԼՈՅԱՆ

ԵՄ-ՈՒՄ ՀԻՇԵԼ ԵՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եվրամիությունը պատրաստ է սահմանափակ կարգավիճակով անդամակցություն տրամադրել որոշ թեկնածուների: Սակայն բոլոր թեկնածուները չէ, որ համաձայն են նման սխեմային՝ հայտարարել է Հունաստանի ԱԳ նախարար Ֆեորգիոս Գերապետրիտիսը Դելֆյան տնտեսական ֆորումի ժամանակ՝ նշելով, որ 2027 թ. երկրորդ կեսին ԵՄ-ին կանդամակցի առնվազն մեկ երկիր՝ թեկնածու երկրներից: Դրանք են՝ Ալբանիան, Բոսնիա եւ Հերցեգովինան, Վրաստանը, Կոսովոն, Մոլդովան, Մոնտենեգրոն, Հյուսիսային Մակեդոնիան, Թուրքիան եւ Ուկրաինան: Հայաստանն այս ցանկում ներառված չէ: Կուլիսներում խոսում են, որ ամենահավանական թեկնածուներն են՝ Չեռնոգորիան՝ Մոնտենեգրոն, Մոլդովան ու Ուկրաինան: Ու դեպի ԵՄ անդամակցություն ճանապարհին հատկապես նշանակալի են Չեռնոգորիայի քայլերը:

Ինչ վերաբերում է Հայաստանին, մեզ համար եւս գալու է այդ օրը, բայց, ի տարբերություն, օրինակ, Ուկրաինայի, Հայաստանն իր անդամակցության հարցում ԵՄ-ին չի շտապեցնում: Երեւանի համար դա առաջին հերթին աշխարհաքաղաքական ընտրություն է՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով. դրական կամ բացասական: Հատկապես որ Հայաստանը Եվրասիական տնտեսական միության անդամ է, իսկ Մոսկվան արդեն բացահայտ ու ուղիղ ձեւով է ասում, որ անհնարին է երկու տարբեր միություններին միաժամանակյա անդամակցությունը: Դրա համար էլ Երեւանը որդեգրել է «դանդաղ շտապելու» քաղաքականությունը, ի տարբերություն հենց Ուկրաինայի, որտեղ ԵՄ անդամակցության հարցում մեծ շտապողականություն են ցուցաբերում՝ դրանում տեսնելով Ռուսաստանի հետ ռազմական հակամարտության թունելի վերջում լույսի ի հայտ գալն ու հետպատերազմական վերականգնման հնարավորությունը: Վրաստանի դեպքում եւս հետընթաց կա, եւ առաջիկա մեկ-երկու տարում ԵՄ անդամակցում ուղղակի հնարավոր չի լինելու:

ՉՕԳՏԱԳՈՐԾՎԵՑԻՆ ԱՅՆ ԱՆՀԱՎԱՆԱԿԱՆ

ՉԿՐԱԺԱՐՎԵՑԻՆ ԱՆՌԵԼԻ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԻՑ, ԿԱՐԳԻ ՉԲԵՐԵՑԻՆ ԱՌՆԵՏՆԵՐԻ ԲՈՒԾԱՐԱՆ ԴԱՐՁԱԾ ՆԿՈՒՂՆԵՐԸ

Զրուցակիցս Փրկարար ծառայության եւ Արդարադատության վետերան, փոխգնդապետ, բանաստեղծական չորս ժողովածուի հեղինակ **Հայկազ Քոթանջյանն** է, որն 8 տարի զբաղվել է մանկավարժությամբ՝ երիտասարդ սերնդին փոխանցելով հայրենասիրության ոգին եւ ռազմագիտության գաղտնիքները: Նաեւ զբաղվում է գեղանկարչությամբ:

- Մի բանաստեղծության մեջ գրել եք՝ «Էլ ձեւ չգիտեմ դու կառավարման, Չունեմ լուծումը դու «հավասարման», Գնա՛, հեռացի՛ր, թող նորերը գան»: Կարծում եք, որ այսօրվա իշխանությունները պետք է հեռանան՝ ճանապարհ բացելով նորերի առաջ:

- Իմ երեխաների, թոռների ապագան այս երկրում եմ տեսնում: Ո՞ւմ ենք այն վստահելու, ո՞վ է այն ղեկավարը, որ կարող է ապահովել արժանապատիվ խաղաղություն, զարգացում եւ բարգավաճում: Այս հարցերն այսօր մտահոգում են բոլորիս: Ներկա ղեկավարի մասին խոսք անգամ լինել չի կարող: Նա Քաջ Նազարի բախտով ու արեւմտյան հովանավորների օգնությամբ իշխանության ղեկն իր ձեռքն առավ ու… Էլ չմեկնաբանեմ: Պատկերն առավել քան տխուր է: Նախկիններն էլ մի բարի պտուղ չէին: Նրանց պատճառով է, որ «սա» ոչ միայն եկավ իշխանության, այլեւ մինչ օրս մնում է աթոռին: Այո, վստահաբար ասում եմ՝ նրանք «սրա» պատվանդանն են: Նրանք որ չլինեն քաղաքական դաշտում, գուցե նոր դեմքեր հայտնվեն, ու բան փոխվի մեր իրականության մեջ: Ես հեռու եմ քաղաքականությունից, ինձ քաղաքական վերլուծաբան չեմ համարում: Զինվորական ծառայության 25 տարիներն ինձ տվել են այլ մտածելակերպ՝ավելի գործնական ու տրամաբանական: Այդուհանդերձ, լինելով նաեւ մտավորական ու ՀՀ «հպարտ» քաղաքացի, տեսնում եմ, որ մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ ամեն ինչ կարծես տեղում է՝ պետություն ունենք, սահմաններ ունենք, իշխանություն ունենք… բայց միեւնույն ժամանակ ինչ-որ բան արմատապես պակասում է: Այդ պակասը տեսանելի չէ առաջին հայացքից, բայց այն զգացվում է ամենուր՝ մարդկանց խոսքում, լռության մեջ, հիասթափության մեջ: Հարցը, որ պետք է ինքներս մեզ տանք, պարզ է՝ մենք իսկապե՞ս ունենք պետություն, թե՞ պարզապես՝ դրա պատրանքը: Այս թեմաներն եմ արտահայտել բանաստեղծություններում:

- Մեկ այլ բանաստեղծությունում գրել եք. «Այգեպա՛ն, զարթնի՛ր, հերի՜ք է քնես, Քաոս է տիրում անգին պարտեզում, Փշերը շուտով կհասնեն եւ քեզ»: Մեզ նո՞ր «այգեպան» է պետք:

- Հենց այդպես: Ես աղաղակող անտարբերություն եմ տեսնում այն համակարգում, որում նվիրումով աշխատել եմ 25 տարի: Ամենաարդիական խնդիրը, ես կասեի՝ գերխնդիրը, պայմանավորված է տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձություններով: Տեսեք՝ գրեթե չեն գործում միջազգային օրենքները, կարելի է ասել՝ այլեւս գոյություն չունի «պետական սահման» հասկացությունը, հատկապես՝ «օդային սահման» ասվածը: Ու ցանկացած պահի, Աստված մի արասցե, պատահաբար կամ դիտավորյալ, կարող են ռումբեր թափվել մեր գլխին, կամ, ասենք, պայթյուն լինի մեր կամ Իրանի ատոմակայանում, ի՞նչ կլինի մեր բնակչության վիճակը: Կա՞ արդյոք քաղպաշտպանության «ինչ-որ մակարդակ», որը պիտի ունենար ցանկացած կարգին պետություն՝ նման իրավիճակում: Չեն գործում ռմբապաստարանները, ապաստարաններն ու թաքստոցները: Որտե՞ղ եւ ինչպե՞ս են պատսպարվելու մեր երեխաները՝ հնարավոր վտանգի ժամանակ… Սա չի հուզում կառավարությանը: Եթե հուզեր, կհրաժարվեին իրենց անռելի պարգեւավճարներից եւ այդ փողերով կարգի կբերեին առնետների բուծարան դարձած նկուղները, կտային դրանք քաղպաշտպանության համայնքային կազմակերպություններին, վերջիններս էլ բնակչության հետ պարբերաբար կանցկացնեին ուսուցողական նախավարժանքներ, որպեսզի քաղաքացին իմանա՝ ուր գնա եւ որտեղ պատսպարվի հնարավոր աղետի դեպքում… Մի խոսքով, շատ անելիքներ կան, բայց անող չկա: Որովհետեւ տեր չկա:

- Բայց այսօր խոսում են տնտեսական աճի մասին, թվեր են բերում, որ տնտեսական աճի շնորհիվ թոշակ են բարձրացրել, պարգեւավճարներ սահմանել… երեւի որ ավելի լավ տնտեսական աճի թվեր նկարեն:

- Լավ ասացիք՝ նկարեն, քանի որ այդ աճը լիարժեք չի արտացոլվում մարդկանց կյանքում: Երբ աշխատողը շարունակում է ապրել անորոշության մեջ, երբ երիտասարդը չի տեսնում երկարաժամկետ հնարավորություն, առաջանում է խորքային խնդիր: Աճը, որը չի բաշխվում արդար եւ չի ստեղծում կայունություն, չի կարող դառնալ պետական հենասյուն: Այն ընդամենը ժամանակավոր ցուցանիշ է, ոչ թե համակարգային առաջընթաց: Տնտեսությունը չի կարող ուժեղ լինել, եթե այն չի ծառայում մարդուն: Իսկ երբ մարդը չի զգում այդ ուժը, առաջանում է ամենավտանգավոր երեւույթներից մեկը՝ անվստահություն սեփական երկրի նկատմամբ: «Ու քանի դեռ աթոռներին պինդ նստած են տխմարները, Մենք կմնանք նրանց գերին»: Այս տողերը հոռետեսակա՞ն տողեր են, թե՞ զգաստացնող:

- Ինչպե՞ս հավատանք, որ «տխմարները պինդ նստած չեն մնա» հերթական եւ վճռական ընտրություններից հետո:

- Մինչ այժմ խոսքս միայն մի նպատակ ուներ. հասկանանք, թե ինչ վիճակում ենք եւ ուր ենք գնում՝ ոչ միայն մեղադրենք, այլ նաեւ գնահատենք: Ոչ թե բաժանվելու, այլ՝ սթափվելու: Յուրաքանչյուր ընտրություն՝ քաղաքական, հասարակական կամ անձնական, ունի հետեւանքներ: Եվ այդ հետեւանքները որոշվում են ոչ թե հույզերով, այլ՝ գիտակցությամբ: Եթե ուզում ենք ունենալ կայացած պետություն, պետք է սովորենք պահանջել ոչ թե խոստումներ, այլ՝ արդյունքներ, ոչ թե բառեր, այլ՝ պատասխանատվություն, ոչ թե պահի լուծում, այլ՝ երկարաժամկետ ռազմավարություն: Որովհետեւ պետությունը պատրանք չէ միայն այն դեպքում, երբ այն կառուցվում է գիտակցված ընտրություններով: Ցավոք, մեր քաղաքացիների մի մասը չի զգում իրեն պետության տեր: Պետությունն ընկալվում է որպես մի բան, որից պետք է ինչ-որ բան ստանալ, ոչ թե մի համակարգ, որի համար պետք է պատասխանատվություն կրել: Այս մտածողությունը քայքայում է հիմքերը: Երբ «ինչ կարող եմ վերցնել»-ը գերակայում է «ինչ կարող եմ տալ»-ին, պետությունը դառնում է թույլ, անկախ նրանից, թե ով է իշխանության: Բոլորիս հայտնի են բոլոր խնդիրների հեղինակներն ու մեղավորները, իսկ եթե ավելի ճշգրիտ ասեմ՝ օրվա իշխանությունը: Հետեւությունը թող մեր հպարտ քաղաքացիներն անեն՝ գնալ եւ նորից ընտրել «դրա՞նց», թե՞ ձայնը տալ ավելի արժանավորին: Իսկ թե ում, դա արդեն թողնում եմ յուրաքանչյուրի սթափ մտքին ու մաքուր խղճին: Թե չէ «այս մեկը» (Նիկոլը) ցույց է տալիս, թե գործ է անում, իբր աղբն է «չուլանից» հանում, բայց իրականում ինքն է աղտոտում ու «հպարտներիս» իրենից վանում:



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԻՆՍԹԵՐՆ, ՈՐՆ ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

Խորհրդային կինոարվեստի ոսկե ֆոնդում իր արժանի տեղը գտած «Անապատի սպիտակ արեւը» ֆիլմը, որի ռեժիսորն է Վլադիմիր Մոտիլը, կարելի է համարել ուշսովետական մշակութային կարեւոր գործերից մեկը: Ֆիլմն էկրան է բարձրացել 1970 թվականին: Այն սովորաբար դասակարգվում է որպես «կարմիր վեսթերնի» կամ «ինսթերնի» ժանրում, սակայն իր մեջ ներառում է, բացի արկածային կինոժանրից, նաեւ բավականին բարդ սիմվոլիկա, որտեղ միախառնված են հեղափոխական առասպելականությունը, գոյաբանական պրոբլեմատիկան եւ հետկայսրական գիտակցությունը:

Մասնագետները նկատում են, որ ուշսովետական ինթերները սովորաբար դիտարկվում են ոչ այնքան որպես գաղափարախոսական գործիք, որքան՝ տարածք, որտեղ կարելի է վերաիմաստավորել հեղափոխական թեզիսներն ու միֆերը: Կինոնկարի նկարահանման աշխատանքները տեղի են ունեցել 1969-70 թթ., երբ «հալոցքի» ժամանակներն արդեն անցնում էին, եւ բրեժնեւյան էսթետիկան «միս ու արյուն» էր ստացել: Այս շրջանում կինոն ուղիղ գաղափարական քարոզչությունից անցնում է ավելի բարդ սիմվոլիկ արտահայտման ձեւերի: Այսօր արդեն կինոյի ոլորտի մասնագետները նկատում են, որ, սկսած 60-ականներից, սովետական կինոյում երկու հարթություն պետք է դիտարկել՝ պաշտոնականը, որը գտնվում էր մակերեսին, եւ փիլիսոփայական գոյաբանականը, որը ձեւավորվում էր մարդկային ռեֆլեքսիայի շնորհիվ: «Անապատի սպիտակ արեւը» կինոնկարը հենց այդպիսին է, որտեղ կարմիրբանակային Ֆյոդոր Սուխովի՝ բասմաչների բանդայի դեմ պայքարով ցույց են տրվում պատմության քաոսայնությունն ու կայուն բարոյական կենտրոնի որոնումները:

Գլխավոր հերոսը կարմիրբանակային Ֆյոդոր Սուխովն է, որը նորմատիվ մարդու արխետիպ է, կայուն բարոյականության կրող՝ սոցիալական կառույցների քայքայվածության պայմաններում: Կերպարներից Վերեշչագինն այն անձն է, որն այլեւս չի պատկանում «հին աշխարհին», սակայն նաեւ լիովին չի ինտեգրվել «նոր աշխարհին»: Կերպարներից Սայիդի դեպքում էլ կարելի է տեսնել՝ սեփական ես-ին կամ ինքնությանը վերադառնալով՝ ազատագրում: Կինոնկարին յուրահատուկ փայլ է հաղորդել «Ձերդ բարեծնություն, տիկին Հաջողություն» երգը: Այն ձեւավորում է կինոնկարի լիրիկական մասը եւ մտցնում ճակատագրի անխուսափելիության մոտիվը: Այն, ըստ էության, կինոնկարի համար էմոցիոնալ մեկնաբանության տարբերակն է: Մի խոսքով՝ «Անապատի սպիտակ արեւը» նաեւ ընտանեկան դիտման համար նախատեսված կինոնկար է, որը ստիպում է մարդուն մտածել փոփոխությունների, պատմական անկայունության, մշակութային հիշողության եւ այլ շատ փիլիսոփայական հարցերի մասին:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ», ՄԻ ԽԱՌՆԵՔ ՄԵԶ ՁԵՐ ՎԱՅՐԻ ԱՐՋԻ ՑԵՂԵՐԻՆ

Եվ եկան ժամանակներ, երբ տեսանք, որ ապրիլի 24-ի օրը պետական մակարդակով պատրաստություն են տեսնում՝ հաջորդ օրը փողոցային խրախճանք կազմակերպելու համար: Եվ Ցեղասպանության հիշատակի օրվան հաջորդող օրը իրոք փողոցում երգում են, պարում ու տոնում քաղաքացու օրը: Ասում են՝ այս տարի այդպես ստացվեց, տոնը համընկավ ցեղասպանության տարելիցին հաջորդող օրվա հետ: Հիմա համընկավ՝ ի՞նչ անես, այս տարի էլ այդպես պատահեց՝ բացատրում են ՔՊ-ականները, որոնք այդ օրը հռչակելիս, թերեւս, գիտեին, որ ապրիլի վերջին շաբաթվա ընթացքում կա մի հիշատակի օր, որն աշխարհասփյուռ բոլոր հայերը սրբորեն նշում են:

Օրացույցն ասում է, որ 2027-ին ապրիլի վերջին շաբաթ օրը, որը քաղաքացու օրն է, ապրիլի 24-ն է՝ համընկել է մեկին մեկ: Փաստորեն, ավելի վատ համընկնում եւս հնարավոր է: Բայց՝ հանգիստ: Օրենքը նախատեսել է, որ այն տարիներին, երբ քաղաքացու օրը համընկնում է ապրիլի 24-ի հետ, քաղաքացու օրը նշվում է դրա հաջորդ օրը, այսինքն՝ ապրիլի վերջին կիրակին: Դա նշանակում է, որ մյուս տարի եւս մեզ սպասվում է նույն սցենարը. մի օր՝ սուգ, մյուս օրը՝ խրախճանք:

Մենք, իհարկե, կարող ենք դադարեցնել այս արատավոր շրջանը, վերջ տալ անտեղի ու անպատեհ խրախճանքներին, վերջ տալ ինքներս մեզ դավաճանած այս հոգեվիճակին ու մոռանալ, որ կար հորինված մի տոն՝ «ՔՊ-ին ամեն դեպքում աջակցող քաղաքացու օրը»: Հանրությունն ունի ռեալ հնարավորություն՝ հաջորդ տարի ապրիլի 24-ին չհիշատակել քաղաքացու օրը եւ դրա հաջորդ օրը փողոցում չանել խորոված-փարթի: Սա չափազանց է մեր չարչարված քաղաքացիների համար. մի օր հրավառված հոգիները ջահերով գնում են ոգեկոչման դեպի Ծիծեռնակաբերդի բարձունք, հաջորդ օրը ծաղիկները խոնարհած լուռ թափորը նորից գնում է զոհերի հուշահամալիր, իսկ երրորդ օրը հանկարծ շատ կտրուկ մարդիկ փողոցում պարում են այն տհաս լոզունգի ներքո, թե «սգալու օրը սգանք, իսկ տոնի օրը տժժանք»: Բայց մի խառնեք մեզ ձեր խորոված-ծասեր ընտրազանգվածի (վայրի արջի) ցեղերին. սգացողներն ու տոնողներն այս օրերին երկու տարբեր մարդիկ էին, նույն մարդիկ չէին, երկու տարբեր հասարակություն էր:

Ես ուշադիր հետեւել եմ ապրիլի 24-ի սգո թափորի ուղիղ եթերին, Ծիծեռնակաբերդի ճանապարհին նայել եմ մարդկանց դեմքերին եւ տեսել, որ այնտեղ գրեթե չկար մարդ, որը հաջորդ օրը պատրաստվում էր գնալ եւ տոնել «ամեն դեպքում ՔՊ-ին աջակցող» քաղաքացու տոնը: Փորձն ապացուցողական աստիճանի հասցնելու համար՝ ապրիլի 25-ին էլ հետեւել եմ «քաղաքացու օր նշող եւ խորոված-ծասի հոտ քաշող» քաղաքացիների դեմքերին: Այո, նույն մարդիկ չէին, ես կասեի՝ անգամ նույն ազգից չէին, նույն հոգսն ու մտքերը չունեին, տարբեր էին այնքան, որ գուցե ոչ էլ նույն մոլորակից էին: Ուրեմն կան տարբեր տեսակի քաղաքացիներ, եւ պետք է հասկանալ, որ նրանցից միայն մի մասի տոնն է նշվում:

Այսպես. քաղաքացիների մի մասը, 24-ի նախորդ օրվանից սկսած եւ դրան հաջորդող օրով շարունակվող՝ սրբադասված անմեղ նահատակների հիշատակն է հարգում. արժանապատիվ, պահանջատեր, լուռ: Իսկ հանրության այլ հատվածը փողոցում ուտում է ու պարում՝ խորոված-ծասից բացի այլ պահանջ չունեցող քաղաքացիներ եւ շատ աղմկոտ: Դժգոհ էին մի բանից՝ խորոված-ծասի գնից, ոչ թե նրանից, որ դեռ սգո հոսքը դեպի Ծիծեռնակաբերդ շարունակվում է, եւ պարելը տգեղ է. ո՛չ, դժգոհություն կար խորոված-ծասի եւ նրբերշիկի (սասինսկու) գներից:

Այդ տոնող մարդիկ, վստահաբար, դժգոհ չեն այն բանից, որ ուղիղ այս օրը վարչապետական ավտոշարասյունը վրաերթի ենթարկեց ու սպանեց երիտասարդ հղի կնոջն ու նրա չծնված երեխային: Չէ, դրա մասին նրանք չեն էլ հիշում. նրանք այսօր նշում են այն քաղաքացու օրը, որը դեռեւս չի ընկել մեքենայի տակ, դեռեւս չի կորցրել իր որդիներին, տունը, ունեցվածքը, հարազատների գերեզմանները: Այն քաղաքացին, որը դեռեւս վայելում է 2018-ի այս օրվա իրենց հաղթանակի հրճվանքն ու այն թշվառ երջանկությունը, որ նրանք դեռեւս չեն առնչվել այն աղետները, որոնք բերել են այս տոնը հռչակած քաղաքացիները:

Եթե կան մարդիկ, ովքեր մասնակցել են այդ երկու միջոցառումներին հավասարապես, եւ նրանք «ամեն դեպքում ՔՊ-ին աջակցող» քաղաքացու դասին չեն պատկանում, ես հայցում եմ նրանց ներողամտությունը, բայց գրեթե վստահ եմ, որ այդպիսի մարդիկ շատ քիչ են կամ գուցե նույնիսկ չկան: Այնպես որ, ինչ էլ ասենք, դասականից լավ չի ստացվելու. մի խառնեք մեզ ձեր վայրի արջի (հիշողություն չունեցող ու քաղցած) ցեղերին...

Եվ այսպես՝ ինչպես պետք է ավարտվի այս մղձավանջը: Նրանք, որ երեկ փողոցում երջանիկ թռչկոտում էին ու ողջագուրվում յուրաքանչյուր ՔՊ-ական պաշտոնյայի հետ, ինչպես երեւում է, քիչ չեն: Սա այն դեպքն է, երբ քանակը որակ չի դառնում, եւ նրանց բազմությունը որեւէ կերպ որեւէ լավ բանի վերածվել չի կարող: Բայց ընտրությունների արդյունքում, եթե պատահի այնպես, որ հնարավոր լինի հաջորդ տարի այդ մարդկանց այս տոնից զրկել, գիտակից մարդիկ պետք է պայքարեն այդ որոշման դեմ: Այդ տոնը պետք է մնա՝ միայն ավելի մասնավորեցնելով իր հիմնական շահառուներին. օրը պետք է կոչվի, ասենք, «ցանկացած դեպքում ՔՊ-ին աջակցող քաղաքացու» օր: Կարող է անգամ դրա շուրջ ձեւավորվել աղանդավորական շարժում կամ առանձին ցեղատեսակ՝ իր առանձին տոներով, հավատով, եկեղեցով ու կաթողիկոսով: Մի քիչ երկար է, բայց հստակ է, որովհետեւ նրանց մյուսներից տարանջատելու հստակությունը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է:

Շաբե ԱՎՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 28.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՍԱՆ ՍՏԵՓԱՆՈՆ ՈՉ ԹԵ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԱԿԱՐԴ, ԱՅԼ ՃԻՇՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԷՐ

Կա ավելի վտանգավոր սխալ, քան երկրի ղեկավարի սխալն է: Ու դա ոչ թե այն պատճառով, որ երկրի ղեկավարները հատուկ ձեւով են սխալվում, այլ՝ այն, որ, ի տարբերություն սովորական մահկանացուների, որոնց սխալն իրենց եւ իրենց ընտանիքին է վերաբերում, երկրի ղեկավարի սխալը ո՛չ իր եւ ո՛չ էլ իր ընտանիքի սխալը չէ: Երկրի ղեկավարի սխալը երկրի սխալն է, երկրի համար հետեւանքներ ունեցող սխալն է:

Այս իմաստով, հատկապես զարմացրին մեր երկրի վարչապետի ապրիլքսանչորսյան ուղերձն ու նրա պատկերացրած «Սան Ստեֆանոն»: Դատելով վարչապետի ուղերձից ու նրա պատկերացրած Սան Ստեֆանոյի պայմանագրից՝ պետք է արձանագրենք, որ այս մարդն ու իր խորհրդականներն այդպես էլ չեն սովորել աշխարհաքաղաքական թակարդն ու աշխարհաքաղաքական ընտրությունն իրարից տարբերել:

Որովհետեւ եթե սովորած լինեին, ապա հասկացած կլինեին, որ Սան Ստեֆանոն իսկական աշխարհաքաղաքական ընտրություն էր, իսկ այն, ինչ իրենք արեցին 2018-ին ու դրանից հետո, այ, իսկական թակարդը եւ այն էլ՝ թուրք-ադրբեջանական, հենց դա էր:

Իհարկե, ոչ ոք չի կարող պնդել, առավել եւս չի կարող ապացուցել, որ եթե չլիներ Սան Ստեֆանոյի պայմանագիրը, միեւնույն է՝ ցեղասպանությունը լինելու էր, այնպես, ինչպես որ ոչ ոք չի կարող պնդել կամ ապացուցել, թե Սան Ստեֆանոն ցեղասպանության միակ պատճառն է: Բայց փոխարենը ոչ թե երկրի վարչապետը, այլ քիչ թե շատ բան հասկացող որեւէ մեկը պետք է հասկանա, ավելին՝ չի կարող չհասկանալ, որ եթե չլինեին Սան Ստեֆանոն ու Սան Ստեֆանոյում հայ ժողովրդի արած ընտրությունը, ապա չէր լինի նաեւ այսօրվա Հայաստանի Հանրապետությունը:

Այս իմաստով, Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը հայ ժողովրդի ոչ թե աշխարհաքաղաքական թակարդն էր, այլ նրա հաջողված աշխարհաքաղաքական ընտրությունը: Ու իզուր թող Նիկոլը Փաշինյանը Հայաստանի Հարապետության՝ այսօր գոյություն ունենալու եւ Սան Ստեֆանոյում արված նրա ընտրության միջեւ կապը տեսնելու փոխարեն Սան Ստեֆանոյի ու ցեղասպանության միջեւ չեղած կապը չփնտրի:

Ի վերջո, Նիկոլը պետք է հասկանա, որ Հայաստանի Հանրապետությունը, որի վարչապետն այսօր ինքն է, այդ պետությունը՝ հայ ժողովուրդը, ո՛չ լոտոյով եւ ո՛չ էլ թղթախաղով չի շահել: Հայ ժողովուրդն այդ պետությունն ունենալու իր ճանապարհը հենց Սան Ստեֆանոյից է սկսել: Այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը Սան Ստեֆանոյում անկախ պետություն ունենալու իր ճանապարհն էր սկսում, ճիշտ այդ ժամանակ տարածաշրջանի շատ ազդեցիկ ազգեր, ժամանակավոր բարեկեցություն ունենալու համար, իրենց «Սան Ստեֆանոյից» էին հրաժարվում: Արդյունքում, հայ ժողովրդի՝ Սան Ստեֆանոյում ընտրած ճանապարհը նրան Հայաստանի Հանրապետություն ունենալուն հասցրեց, իսկ նրանք, ովքեր այն ժամանակ իրենց «Սան Ստեֆանոյից» էին հրաժարվում, այ, նրանք մինչ այսօր էլ անկախ պետություն ունենալու համար տոնաններով իրենց արյունն են հեղել եւ հեղում են, բայց, միեւնույն է, չեն հաջողում:

Այնպես որ, որքան էլ Նիկոլն ուզենա Սան Ստեֆանոյի պատմությունը որպես թակարդի ու թակարդն ընկնելու պատմություն ներկայացնել, միեւնույն է՝ Սան Ստեֆանոն ո՛չ թակարդի եւ ո՛չ էլ թակարդ ընկնելու պատմություն չէ: Սան Ստեֆանոյով սկսված ու մինչեւ 2018 թվականը տեւած Սան Ստեֆանոյի պատմությունը ոչ թե աշխարհաքաղաքական թակարդի ու աշխարհաքաղաքական թակարդն ընկնելու, այլ Հայաստանի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետություն ունենալու մասին պատմություն է:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am